

էլ միաժամանակ շարժման մէջ ընկան, և երկու ժամուայ մէջ՝ արդէն բանակը հաւաքուած՝ հեռացաւ դէպի Երևան:

Անս ոչ մի լուր չիմացայ կնոջս մասին. բայց պարզ էր, որ եթէ նա սարդարի ձեռքն էր ընկել, նա նրա կանանոցում պիտի լինէր: Քայլերս ուղղեցի դէպի Երևան, որտեղ հասնելով՝ գնացի Ջանգի գետի կամուրջի վրայ կանգնեցի: Այնտեղից ես կարողանում էի տեսնել սարդարի կանանոցի մի մասը, և որովհետեւ պարսիկ զինուորներն այնտեղից էին անցնում, ոչ ոք չկարծեց թէ ես օտարական էի: Ինձ նայողը կարծում էր որ ես էլ սարդարի մարդկանցից մէկն էի:

«Սարդարի պալատը շինուած է մի գահավէժ ժայռի վրայ, որի ստորոտից անցնում էր Ջանգի գետը: Այդ շինութեան գլխաւոր դահլիճը մի մեծ պատուհան ունի որ բացւում է գետի վրայ: Դրա կողքին բացւում են կանանց սենեակների պատուհանները, որոնք ինչպէս, ես տեսայ, լաւ ապահովացւում էին: Կամուրջի վրայից անցուղարձ անողները կարող էին տեսնել այդ պատուհաններից: Ես մտածեցի. «Եթէ Մարիամն այնտեղ է, նա գոնէ կը տեսնի և կը ճանաչի ինձ. բայց ասեմք թէ տեսաւ ու ճանաչեց, յետոյ»: Այդքան բարձրութիւնից ցած թռչելը արհնար էր, և բացի մի նոճուց որ բարձրանում էր ժայռի վրայ, պատուհանների տակ՝ ոչ մի ուրիշ բան չկար որ կտրէր հեռաւորութիւնը: Երկար ժամանակ կամուրջի վրայ կանգնելուց յետոյ, յանկարծ վախեցայ որ մէկը տեսներ ինձ. ուստի տխուր սրտով հեռացայ, մտածելով արեւամտին վերադառնալ նոյն տեղը:

«Երկու շաբաթ ես օրեկան երեք անգամ գնում էի կամուրջի վրայ և նայում էի կանանոցի պատուհաններին: Մի երեկոյ նոճու վրայ նայող պատուհանը բացուեց, և մի կին դուրս նայեց այնտեղից: Կարծես թէ ճանաչում էր ինձ: Ես ձեռքերս մեկնեցի դէպի նրան, նա էլ նոյնն արեց: «Հէնց ինքըն է, ասացի ես. անտարակոյս նա է, Մարիամն է»:

«Առանց մի ըոպէ վարանելու, ես ընկայ գետը, և լողալով անցայ միւս կողմը, որտեղ կանգնեցի պատուհանի տակ: Երկուսս էլ ուղում էինք խօսել, բայց ի՞նչպէս խօսէինք: Խօսելը վտանգաւոր էր: Նա մի քանի անգամ իր ձեռքերը մեկնեց դէպի ինձ. կարծես թէ նա պատրաստւում էր դուրս թռչել պատուհանից: Ես խիստ վախեցայ, սարսափեցի. որովհետեւ, եթէ նա այդպէս անէր, կը սպանուէր: Յանկարծ նա պատուհանը փակեց և մի քանի ըոպէ չերեաց: Յետոյ պատուհանը կրկին բացուեց, և նա երեւաց. բայց նրա դէմքը ներքին սաս-

տիկ յոյզ էր արտայայտում: Ես չէի հասկանում թէ ինչ պատահեց նրան: Ես ընկայ սաստիկ մտատանջութեան մէջ, և մինչդեռ նայում էին նրան, նա յետ գնաց պատուհանից, կըրկին մօտեցաւ, էլի յետ գնաց, էլի առաջ եկաւ և նա դուրս թռաւ օդի մէջ:

«Գլուխս պտոյտ եկաւ երբ ես տեսայ նրան ճօճուելիս նոճու ճիւղերի մէջ. բայց հաւաքելով ոյժերս, մի ակնթարթում բարձրացայ ծառի վրայ և գրկեցի նրան: Կարծես թէ մի գերբնական ոյժ եկաւ վրաս. որովհետեւ իմ թանկագին բռնով հանդերձ ծառից իջնելը և գետը լողալով միւս կողմը անցնելս, մէկ րոպէի գործ եղաւ: Մարիամը ուշաթափուած էր. նրա մարմինը ջարդուած էր. ծառի ճիւղերը վիրաւորել էին նրան. յորդ արիւն էր հոսել նրանից: Բայց նա կենդանի էր. նա դեռ շնչում էր: Նա բացաւ իր աչքերը և մրմնջաց «Յովսէփ»: Սըրտիս ուրախութեանը չափ ու սահման չկար:

«Երբ նա քիչ հանգստացաւ, ես կրկին գրկեցի նրան և առաջ գնացի մտածելով լեռները գնալ. բայց յիշելով, որ յամենայն դէպս, Աշտարակի գետի կամուրջի վրայով պիտի անցնեմ ուստի քայլերս ուղղեցի դէպի այնտեղ: Մենք մի քիչ հանգստանում էինք կամուրջի մօտ, երբ լսեցինք ձիերի տոնաձայներ:

«Թէպէտ ես արդէն յոգնած էի, սակայն վախը ոյժ ներշնչեց իմ մէջ, և ես դարձեալ գրկելով կնոջս, շտապեցի դէպի այն աւերակները, որտեղ դուք գտաք մեզ: Այնտեղ աւերակների մէջ, ես մեծ երկիւղով և մտատանջութեամբ դիտում էի ձեր շարժումները, կարծելով որ սարդաբն է ձեզ ուղարկել կալանաւորելու մեզ»:

«Այս իմ տխուր պատմութիւնը լսելուց յետոյ, ասաց Յովսէփը, արդեօք դուք կը գթա՞ք մեզ, կը խղճա՞ք մեզ, թոյլ կը տա՞ք որ մենք վերադառնանք մեր տունը: Եթէ այո, մենք երկուսս էլ մինչ գերեզման երախտապարտ կը մնանք դէպի ձեզ: Դուք կը ստանա՞ք մեր ծնողների և ազգականների սրտաբուլիս օրհնութիւնները, որոնք այժմ ամենաթշուառ վիճակի մէջ են, և որոնց մեծ երջանկութիւն և ցնծութիւն պիտի պատճառէ մեր վերադարձը: Ո՛վ էլ որ դուք լինէ՞ք, ինչ պաշտօն էլ որ ունենա՞ք, ինչ գործով էլ որ ուղարկուած լինէ՞ք այստեղ այնուամենայնիւ, ես տարակոյս չունիմ, որ դուք մարդկային զգացումներից զօրեղ չէ՞ք: Դիտե՞ք մեզ, և Աստուած հազարապատիկ կը վարձատրէ ձեզ: Թէև մենք ձեր կրօնակիցը չենք, բայց մենք կ'աղօթենք ձեզ համար, և վստահ եմ

ար Ողորմած Տէրը, կը լսէ մեր աղօթքը քանի որ բարի նպատակով կը լինի մեր հայցուածքը *):

ԳԼ. ԼԸ.

Նախընթաց պատմութեան շարունակութիւնը:—Թէ Հաջի Բարան ինչ է վճռում անել Յովսէփի վերաբերմամբ:

Հայ երիտասարդը վերջացրեց իր տխուր պատմութիւնը, ար մեծ զարմանք ու հիացմունք պատճառեց ինձ: Յետոյ նա թոյլտուութիւն խնդրեց հեռանալ և իր կնոջը տեսնելուց յետոյ վերադառնալ մօտս:

Նա գնաց ու քիչ ժամանակից յետ վերադարձաւ:

—Ի՞նչպէս է նա, հարցրի ես:

—Նա այժմ բաւական լաւ է, պատասխանեց նա, սակայն անյնքան արիւնաքամ է եղել, որ շատ անկարող է: Նրա մէկ սրունքն էլ սաստիկ ցաւում է:

—Բայց նա չպատմեց քեզ թէ ինքն ի՞նչպէս էր տարուել սարդարի կանանոցը:

—Ինչպէ՞ս չէ, նա այսպէս պատմեց ինձ:

«Այն րոպէին երբ մեր հարսնարանում մի բան վայր ընկաւ և դու ինձ ասացիր «փախիր», ես հազիւ կարողացայ վերցնիլ չարսաւս և դուրս փախայ, բայց տան բակումը մի պարսիկ յարձակուեց վրաս և կայծակի լոյսով տեսնելով որ ես գեղեցիկ եմ, փախցրեց ինձ մի հեռու տեղ, որտեղ նա ըստպասեց մինչև որ մի ձիաւոր ընկեր վրայ հասաւ: Նրանք երկուսով ինձ ձիու վրայ դրին և քշեցին դէպի Ապարան, որտեղ գտնուում էր պարսիկների բանակը, և որտեղ նրանք ինձ ծախեցին սարդարին: Սարդարն ինձ գնելով, հրամայեց իր ներքինիներին ինձ իսկոյն տանել իր կանանոցը Նրեանում: Որպէսզի սարդարին դուր չգայի, որպէսզի նա ինձ չսիրէ՝ ես իմ ընկերուհիներին—լծակիցներին հաւատացրի որ իբր թէ ես ամուսնացած եմ, թէ այս ինչ մարդն իմ ամուսինն է, և թէ ես արդէն մի հնացած, մաշուած անպիտանացած կին եմ... Բայց դժբախտաբար ես իմ գաղտնիքը յայտնեցի մի պարսկուհու որ իրան անկեղծ բարեկամուհի էր ձեռնարկում ինձ: Նա խոստացաւ ինչ որքի չհաղորդել ինձանից իմացածը. սակայն նա շուտով դաւաճանեց իր խոստումը, և սարդարին յայտնեց իմ

*) Այս պատմութեան դէպքը իսկապէս պատահել է:

հոլ և ինչ լինելը: Մարդարը լսելով իմ պատմութիւնը, լուր ուղարկեց ինձ պատրաստուել իրան ընդունելու համար...

Շերակայիւր իմ դրութիւնը: Ես աւելի ուրախ, աւելի պատրաստ կը լինէի յօշոտուել մի գազանից, քան սարդարի կրքերին բաւականութիւն տալ: Ես վճռեցի փախչել, բայց փախչելու ոչ մի հնարաւորութիւն չկար ինձ համար: Ես երբէք դուրս չէի նայել այն պատուհանիցը, որ նայում էր նոճու վրայ, սակայն այս ճգնաժամում կարծես թէ մէկը դրդեց ինձ, պատուհանը բանալ և այնտեղից դահալիժուել ցած: Աւելի լաւ է, ասացի ես, որ ջարդուեմ, ջախջախուեմ, մեռնեմ՝ քան անճնատուր լինեմ սարդարի պէս մի հրէշի: Մինչդեռ, այդպէս մտածում էի, բարեբախտաբար քեզ տեսայ կամուրջի վրայ կանգնած: Ես վճռեցի մեռնել կամ ընկնել քո գիրկը: Դու յիշում ես, որ ես մի անգամ շտապմամբ պատուհանը փակեցի և մի քանի բոպէ էլ չերկացի: Այդ այն ժամանակն էր, երբ մի քանի կանայք ներս մտան սենեակս ինձ բաղնիք տանելու համար, որպէսզի սարդարին ընդունելու համար մաքուր լինեմ: Ես մի քանի պատճառներ տալով, յետաձգեցի բաղնիք գնալս և երբ նրանք դուրս գնացին, ես գործադրեցի վճիռս:

Յովսէփը վերջացնելով իր կնոջ պատմածը, անձկութեամբ սպասում էր իմանալ՝ թէ ես ինչ էի անելու: Նա խնդրեց ինձանից, որ իբրև բարեկամ ես օգնեմ իրան իմ խորհուրդներով:

— Բո բոլոր պատմութիւնը լսելուց յետոյ, ասացի ես, ինձ համար դժուար է քեզ իսկոյն ազատ թողնել: Դու ինքդ, քո լեզուով խոստովանուեցիր որ սարդարի կանանցից մի կին ես փախցրել—մի յանցանք, որ մուսուլմանների երկրում մահով է պատժուում, որովհետև հարեմը մեր աչքում շատ սուրբ տեղ է: Եթէ ես ուզեմ օրէնքի համաձայն վարուել, պիտի պարտաւորուեմ քեզ և կնոջդ հէնց այս բոպէիս ուղարկել սարդարի մօտ, բայց ես այդ բանը չեմ անելու, եթէ դու կը խոստանաս ծառայել ինձ իբրև ուղեցոյց այս կողմերում, որտեղ մենք բոլորովին անծանօթ ենք ճանապարհներին: Եթէ դու յանձն կ'առնես այդ պաշտօնը, անշուշտ դու վարձատրութիւն կը գտնես, և ես իրաւունք կ'ունենամ քո մասին շատ նպաստաւոր խօսել սարդարի և դահապետի մօտ: Ես ամեն ջանք գործ կը դնեմ ազատելու քեզ և կնոջդ: Դու մեզ հետ կը գաս, և կ'ինդ դեռ կը մնայ գիւղում այդ բարի ընտանիքի խնամատարութեան ներքոյ, մինչև որ մենք վերադառնանք:

Հայ երիտասարդը ուրախութեամբ ընդունելով իմ առաջարկած պայմանը, յամբուրեց ձեռքս և պատրաստուեց մաս-

նակցելու մեր արշաւանքին. բայց եւ թոյլ տուի նրան, նախ
գնալ իր կնոջ մօտ, յայտնելու նրան թէ ինչ պայման էր փա-
կուել մեր մէջ, և հաւաստիացնելու որ շուտով իրանք կ'ազա-
տուէին:

Նա կրկին և կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց իմ
բարեխաղութեան համար, և մենք դեռ մեր տեղից չէինք շար-
ժուել, որ նա այծեամի պէս բարձրացաւ մեր առջևի բլուրի
վրայ և գնաց:

ԳԼ ԼԹ.

Իր հաւատարմութեամբ՝ Յովսէփ արժանանում է Հաջի Բաքայի վստահու-
թեանը

Հայ երիտասարդը վերադարձաւ և մենք ճանապարհուե-
ցինք դէպի վրաց սահմանագլուխը: Մենք անցնում էինք լեռ-
նային այնպիսի ճանապարհներով, որ բոլորովին անծանօթ
էին ճանապարհորդներին. սակայն Յովսէփը մեզ զարմացնում
էր տեղագրական գիտութեամբ:

Նա՝ Յովսէփը կարծես թէ ամենևին ցանկութիւն չունէր
իր հայրենի գիւղը դառնալու. նա մինչև անգամ ինձ հաւաս-
տիացրեց որ, եթէ ես իրան տուն վերադառնալու իրաւունք
էլ տայի, նա դարձեալ չէր գնայ, որովհետև նա երգուել էր
տուն գնալ միայն այն ժամանակ՝ երբ իր կինը հետը կը լինէր:

Սարդարին հասած այն լուրը թէ՛ ռուսները արշաւում
էին մեր վրայ, բոլորովին անհիմն էր, որովհետև մեզ յայտ-
նուեց, որ նրանք սպասում էին Փամբակի գետի ափերի վրայ
և ապահովուել էին Ղարաքիլիսայում:

Մենք շատ հեռու չէինք մեր թշնամու բանակից, որին
երբ մենք բաւական մօտեցանք, ես հետաքրքրուեցի մի ճիշտ
տեղեկութիւն ստանալու ռուսների թուի, պատրաստութեան և
տրամադրութեան վերաբերմամբ:

Յովսէփի դրութեան վրայ մի քիչ մտածելով, ես ինձ ա-
սացի.

— Ես կամ կը փրկեմ այդ երիտասարդին կամ նրա կո-
րստեան պատճառը կը դառնամ: Այժմ մի լաւ առիթ ունեմ:
Ես նրան կ'ուղարկեմ Համամլու, և եթէ նա ինձ համար կը
բերի ցանկացածս լուրը, ամեն ջանք գործ կը դնեմ ազատելու
և՛ իրան և՛ իր կնոջը, սակայն եթէ նա խաբէութիւն անի, եթէ
նա մատնի մեզ, այն ժամանակ գիտեմ ինչ կ'անեմ—նրան կը

հեռացնեմ և կնոջը կը յանձնեմ սարդարին, որից մի լաւ պարգև կը պահանջեմ իր հարեմից փախած գերուհուն իր ձեռքը յանձնելու համար:

Նրան մօտս կոչելով, յայտնեցի ցանկութիւնս: Նա իսկոյն ըմբռնեց միտքս, և առանց դանդաղելու յօժարակամութիւն յայտնեց կամքս կատարելու: Գլխարկը թեք դնելով, փէշերը դօտու մէջ խրելով և իր հրացանը ուսը ձգելով՝ նա այծեամի պէս վազեց լեռն ի վայր և մի քանի ըտպէում անյայտացաւ:

— Բա՛ժ թէ ըրա՛ժ թ (գնաց որ գնաց), ասաց երիտասարդ դէլիբանը: Նա այլևս չի վերադառնալ: Էլ նրա երեսը չենք տեսնիլ:

— Բայց ինչո՞ւ չի վերադառնալ նա, հարցրի ես: Դու գիտես որ նրա կինը մեզ մօտ պատանդ է, և չնայած որ նա հայ է, այնուամենայնիւ ես վստահ եմ, որ նա երբէք չի հրաժարուելու իր կնոջից:

— Այո՛, ասաց դէլիբանը, ճշմարիտ է որ նա հայ է. բայց դու չմոռանաս որ նա միեկոյն ժամանակ և՛ իսաւվի (քրիստոնեայ) է: Ռուսները ևս իսաւվի են, և մինք լաւ գիտենք, որ երբ անհաւատները միմեանց զոհնում են, երբ նրանք միմեանց մօտ են, նրանք աւելի շուտ կը մեռնեն քան կը վերադառնան իսլամի որդիների մօտ: Ո՛չ, եթէ նա նոյնիսկ «անմեղ ու անարատ Յովսէփը» լինի, և նրա կինն էլ Զուլէյխան, ես հաւատացած եմ, որ նա այլևս չի վերադառնալ: Ես գրազ եմ գալիս ձիուս վրայ— մատնացոյց անելով իր հեծած ձիուն, որ նա գնաց, գնաց որ գնաց. էլ չես տեսնիլ նրան:

— Այդ ի՞նչ ես ասում, իմ փոքրիկ աղա՛, խորխտաբար մէջ ընկաւ արեակէզ և բազմակնճիւղ դէմքով, ցանցառ մօրուքով, բեխերով և յօնքերով մի ծեր ձիաւոր: Դու հասկանո՞ւմ ես որ զուր տեղը մի մեծ յանցանք ես գործում: Դու ի՞նչ իրաւունք ունիս գրազ գալու այդ ձիու վրայ՝ որ քո սեփականութիւնը չէ: Չէ՞ որ այդ ձին Շահին է պատկանում, և դու ի՞նչ իրաւունքով ես քեզ թոյլ տալիս գրազ գալու դրա վրայ:

— Է՛հ, իբր թէ դու էլ իրաւունք ես քննում, ասաց դէլիբանը. ես քեզ ասում եմ, որ Շահի ապրանքը իմն է, և իմն էլ խօ հէնց իմն է, էլ ի՞նչ իրաւունք, միրաւունք ես ասում:

Ինչն է, այս և այսպիսի անկարգ խօսակցութիւններով մենք շարունակեցինք ճանապարհը, մինչև որ հասնելով մի լաւ խոտաւէտ տեղ, իջանք մեր ձիերից՝ ցանկալով քիչ հանգիստ առնել այդտեղ: Մեր ձիերի ոտքերը կապելով՝ թոյլ տուինք, նրանց արածելու խոտերի վրայ և մենք ինքներս մեր վերարկուները գետնի վրայ փռելով՝ նստանք հանգստանալու:

Իմ մարդկանցից մի քանիսին՝ որոնք քաջ և վարժ էին աւագակութեան մէջ, ես հրամայեցի շուտով գնալ և բերել մեզ համար մի ոչխար, մի քանի հաւեր կամ որևէ մի ուրիշ բան, որ նրանց կը յաջողուէր ձեռք բերել մեր ընթրիքի համար: Ես կամք յայտնեցի նոյն տեղում գիշերելու, եթէ Յովսէփը չվերադառնար մինչև գիշերը:

Մէկ ժամ անցած՝ մեր մարդիկը վերադարձան իրանց հետ բերելով մի ոչխար, որ նրանք խլել էին գետի մօտերը ու մարածող հօտից: Ոչխարը մորթուեց, և մի մեծ կրակ պատրաստուեց նրան ամբողջապէս խորովելու համար: Կրակի երկու կողմում տնկեցին երկու ցիցեր, որոնց ճղնաւորուած ծայրերի վրայ հորիզոնական ուղղութեամբ դրին մի երկայն փայտ, որից և կախեցին ամբողջ ոչխարը: Ինձ յարգելու համար, իմ մարդիկը կտրեցին ոչխարի ամենալաւ մասերից մի քանի կտոր, և շարելով մի հրացանի սմբայի (շիշ) վրայ, խորովեցին և մատուցին ինձ: Իսկ ամբողջ ոչխարը դեռ լաւ չխորովուած՝ հէնց տեղնուտեղը լափուեց, վերջացաւ:

Մեր ընթրիքը վերջացաւ, մութը կոխեց, բայց Յովսէփը դեռ չերկաց: Մենք վճռեցինք գիշերել այնտեղ. ուստի մի երկու մարդ նշանակելով որպէս պահապաններ և միևնոյն ժամանակ մեր ձիերին խնամք տանողներ՝ պառկեցինք քնելու:

Կէս գիշերից մի ժամ անցած՝ երբ լուսինը կամաց-կամաց իջնում էր, հեռուից լսուեց մի ձայն: Մի քանի րոպէից յետոյ նոյն ձայնը կրկնուեց մեզ շատ մօտ, և մենք անմիջապէս վեր ելանք մեր տեղից: Նոյն ձայնը մի քանի անգամներ կրկնուեց և մեզ պարզ յայտնուեց, որ դա Յովսէփի ձայնն էր: Մենք էլ մեր կողմից ձայն տուինք և նա շուտով երկաց:

Չափազանց յոգնած էր երևում նա. բայց և այնպէս տրամադիր էր պատմելու մեզ, թէ ինչպէս էր կատարել իմ յանձնարարութիւնը:

Նա ասաց.

— Ձեզանից հեռանալով՝ ես քայլերս ուղղեցի դէպի Համալու, ուր հասնելով՝ ես ճանաչուեցի մի քանի ուռւ գինուորներից, որոնց յաջողուել էր ազատուել մեր գիւղի վրայ թափուած պարսիկների յարձակումներից: Նրանք իսկոյն ինձ տարան իրանց ամրոցը և շատ քաղցրութեամբ վերաբերուեցին դէպի ինձ: Յետոյ ինձ առաջնորդեցին իրանց զօրագլխի մօտ, որը զանազան հարցերով աշխատեց իմանալու թէ ես ինչ նշապատակով էի գնացել իրանց մօտ: Ես յայտնեցի նրան, որ իմ միակ տենչն ու նպատակն էր որոնել կնոջս, և ուրիշ ոչինչ: Արդէն նրանք՝ ուռւները լաւ գիտէին թէ պարսիկները ինչ:

Թշուառութեան, ինչ որբալի դրութեան մէջ էին գցել իմ հայ-
րենի գիւղը: Ինձ ծանօթ ուսանեան էլ հաւատացին որ ես իս-
կապէս կնոջս էի որոնում, հետեապէս ոչ ոք չկասկածեց ինձ
վրայ: Ինձ թոյլ տրուեց ազատ շրջել ամրոցի շուրջը, և ես
սրան-նրան հանդիպելով՝ շատ զգուշութեամբ հարցեր էի տա-
լիս: Վերջապէս ինձ յաջողուեց տեղեկանալ այն՝ ինչ որ դուք
ցանկանում էիք, և դեռ ամրոցի դռները չփակուած՝ ես աննը-
կատ փախայ և եկայ:

— Շատ լաւ, ասացի ես, այժմ ասա տեսնենք ի՞նչ լուրեր
ես բերել:

Յովսէփը մանրամասնօրէն պատմեց ինձ ամեն բան, և ես
տեսնելով որ նրա բոլոր պատմածները ճշմարիտ են, շատ ու-
րախացայ և պատուիրեցի նրան գնալ քիչ հանգստանալու: Իր
հաւատարմութեամբ հայ երիտասարդը արժանացաւ իմ վստա-
հութեանը:

Քիչ էլ հանգստանալուց յետոյ ես հրամայեցի իմ խմբին
պատրաստուել Նրեան վերադառնալու: Մենք ճանապարհ ըն-
կանք: Յովսէփը քայլում էր: Ես նրան արտօնութիւն տուի,
յոգնած ժամանակ նստել ձիաւորներից մէկն ու մէկի ետևում:
Մենք անցանք կարճ ճանապարհներով, և շուտով հասանք Աշ-
տարակ գիւղը, որտեղ մի քիչ սպասեցինք լուր ստանալու
սարդարի և դահճապետի շարժումների և դիտաւորութիւնների
մասին: Ես թոյլ տուի Յովսէփին գնալ այցելելու իր կնոջը:
Նա գնաց և շուտով վերադարձաւ անչափ ուրախացած, որովհե-
տե նրա կինը գրեթէ կատարելապէս առողջացել էր: Նա անչափ
գոհ էր այն ընտանիքից որ խնամատարել էր իր սրտի հատորին:

Սարդարն ու դահճապետը հեռացել էին Նրեանից, և այ-
ժմ նրանց բանակը գտնւում էր հայոց պատրիարքարանի
մօտ: Դէպի ուր մենք գնացինք, Յովսէփը մեզ հետ:

Գլ. իս.

Հաջի Բաբան պատմում է իր իշխանաւորներին թէ ինքն ինչպէս է կա-
տարել իրան յանձնուած պարտականութիւնները:— Նա բարեկամ է հան-
դիսանում թշուառներին:

Էջմիածնի վանքը—ինչպէս դա կոչւում է հայոց լեզուով,
կամ Ուչ Գէլիսիա՝ տաճկերէն և պարսկերէն լեզուով—գտնւում
է մի ընդարձակ ու լաւ մշակուած դաշտի վրայ, որը ոռոգւում
է Արաքս գետից և մի քանի ուրիշ գետակներից:

Դա կանգնած է Աղբը Դաղ բարձր լեռան ստորոտում ո-

բին (լեռան) քրիստոնեաները՝ ընդհանրապէս, և հայերը՝ մասնաւորապէս, մեծ պատկառանքով են նայում. որովհետեւ, ինչպէս Յովսէփն ինձ ասաց, այդ լեռան ձիւնապատ գագաթի վրայ է իջել Նոյեան տապանը:

Էջմիածնի վանքը, որ ամբողջ Ասիայում յայտնի է իր մեծագին դանձերով ու հարստութիւններով, շրջապատուած է պարիսպներով և ապահովուած է ամուր ու մեծ դռներով: Այստեղ, այս վանքում է միշտ բնակւում հայոց եկեղեցւոյ գլուխը մի խումբ եպիսկոպոսների, վարդապետների և սարկաւազների հետ միասին, որոնցից վիճակաւորներ են ուղարկւում Ասիայում գտնուող բոլոր հայոց եկեղեցիները:

Նա՛ պատրիարքը ամբողջ Պարսկաստանում յայտնի է խալիֆէ կամ խալիֆ տիտղոսով—մի պատուանուն, որ նշանակում է և՛ հոգեւոր և՛ մարմնաւոր իշխան, ինչպէս որ մի ժամանակ կոչւում էին Բաղդատի իշխանները:

Քրիստոնեաները նրան սովորաբար պատրիարք են կոչում, և նրա եկեղեցին ընդհանուր հայոց համար մի սուրբ ուխտատեղի է: Որոշ ժամանակներում աշխարհիս զանազան կողմերից բազմաթիւ ուխտաւորներ են գալիս այստեղ կատարելու մի պարտք՝ որ սրբազան է նրանց համար:

Ինչէն, մեր քայլերն ուղղեցինք դէպի վերոյիշեալ վանքը, որ շրջապատուած էր սարդարի և դահնապետի միացած բանակով: Վանքի դուռը դեռ չհասած՝ մենք լսեցինք, որ այդ երկու պետերը իրանց համար բնակարան էին ընտրել հէնց ներսը—խալիֆի հիւրերն էին:

—Այս անհաւատների—հայերի գեօռերը (գերեզմանները) մենք կրակ կը տանք, մենք կ'անիծենք դրանց հայրերին, ասաց երիտասարդ դէլիքանը հրճուանքով: Օ՛խ, ի՜նչ առատօրէն անուշ կանենք սրանց գինին: Մենք շատ ենք չարչարուել, շատ ենք յոգնել, սրանց գինին մեզ լաւ կը թարմացնի:

—Տօ, այդ ի՜նչ ես ասում, բացազանչեցի ես: Ես զարմանում եմ, քեզպէս մի մուսուլման ի՜նչպէս է թոյլ տալիս իրան գինի խմելու մասին մտածել: Չե՞ս իմանում որ գինի խմելով՝ ինքդ էլ գեատուր կը դառնաս:

—Ապա սարդարն ի՜նչպէս է խմում, հարցրեց նա: Օ՛, նա խմում է ինչպէս մի իսաւի, և ես չեմ հասկանում թէ ինքս ինչո՞ւ չպիտի խմեմ:

Մօտենալով վանքին, ես Յովսէփին մօտս կանչեցի և պատուիրեցի նրան չհեռանալ, միշտ պատրաստ լինել այնտեղ: Ես նրան ասացի, որ եթէ ինձ հարկ լինէր իր շահերը պաշտպանելու համար երդուել սարդարի առաջ, ինքը պիտի նախա-

պատրաստուած լինէր հաստատելու իմ ասածները: Ես յատկապէս պատուիրեցի նրան, որ իր մատուցած ծառայութիւնների մասին սարդարի հետ խօսելիս, շեղուէր ճշմարտութիւնից հրէպի որ կամենար, և նրան այնպէս հասկացնէր, որ իբր թէ ինքը մեծ վտանգների ենթարկուելով է կարողացել ուսանների մասին լուրեր հաւաքել և բերել մեզ համար. նաև մի հաշիւ ներկայացնէր ցոյց տալու, որ իբր թէ ինքը շատ փող էր վատնել սարդարի և Շահի կառավարութեան շահերի համար:

— Եթէ դու իմ հրահանգների համաձայն վարուես, ասացի, ես յոյս ունեմ, որ իբրև վարձատրութիւն՝ քեզ թոյլ կը արուի կնոջդ վերցնել և վերադառնալ ձեր գիւղը: Ի հարկէ, դու էլ բաւական նազ-ու-դուզ անելուց յետոյ կը համաձայնես և կ'ընդունես այդ արտօնութիւնը՝ իբրև հաւասարակշռութիւն քո պահանջներին:

Այսպէս պայմանաւորուելուց յետոյ, մենք անցանք այն մեծ կամարի տակից, որ տանում է վանքի նախադաւիթը: Այստեղ խուժը-խուժը ման էին գալիս սարդարի և դահճապետի ձիաւորներն ու ծառաները: Մի կողմում, երկու ծայրերը գետնին դամուած մի երկար պարանից՝ կապուած էին մի շարք ձիեր, որոնց պահապաններից մի քանիսը պառկած էին, և միւսները նստած՝ թամբերի և ձիերին վերաբերեալ իրերի արանքներում: Բակի միւս կողմում էլ կապուած էին մի շարք ջորիներ, որոնց զանգակների զընդ-զընդոցը ականջ էր խլացնում, ոչ պակաս խլացուցիչ էին և՛ ջորեպանների աղմկալից վիճաբանութիւնները:

Երկրորդ բակումը կապուած էին աւազ ծառաների ձիերը, և իրանք՝ ծառաները բնակուել էին բակի երկու կողմերի նկուղներում:

Մենք իջանք նախադաւթումը, և ես անմիջապէս հետաքրքրուեցայ իմանալու թէ, ինչ տեղ էր բնակում իմ իշխանաւորը—դահճապետը:

Կէս օր էր: Ինձ յայտնեցին, որ նա այդ ժամին սարդարի մօտն է: Ես ցանկութիւն յայտնեցի իսկոյն տեսնուելու նրա հետ, և հէնց իմ ճանապարհորդական փոշաթաթախ շորերով ու կօշիկերով՝ ներկայացայ նրան:

Սարդարն ու դահճապետը, կարծես թէ բոլորովին գրաւել էին հայոց այդ վանքը, և զրկել էին խալիֆին իր տեղից, պաշտօնից և իշխանութիւնից. որովհետև, նրանք բնակուել էին հէնց նրա սենեակներում: Խեղճ վարդապետներն էլ՝ գլխիկոր, շուարած, վախժախելով ու տարակուսած ման էին գալիս բակերում: Խեղճերը այնպիսի մի դրութեան մէջ էին, որ կարծես

թէ վախենում կամ ամաչում էին ցոյց տալու պարսիկներին, որ իրանք այդ մենաստանի բնակիչներն են եղել:

Երկու պարսիկ իշխանների սիրական ձիերը կապուած էին հէնց եկեղեցւոյ պատերի մօտ, և նրանց հանգստութեան համար անելի հոգ էր տարւում, քան խեղճ, հայ եկեղեցականներին յարմարութեան համար:

Նախ քան շարունակելու պատմութիւնս, ես այստեղ պիտի կանգ առնեմ ծանօթացնելու ընթերցողին՝ սարդարի բնաւորութեան հետ:

Աշխարհումս, նրանից անելի ժանտերես մարդ չկար: Նրա ոգևորուած ժամանակ՝ նրա աչքերը, որ իրանց սովորական արտայայտութեամբ նմանում էին անթափանցիկ ապակու կըտորների, վառւում էին այնպիսի մի բոցով, որ մարդ սարսափում էր նրա երեսին նայելիս, և երբ նրա դէմքը այդպիսի ահաւորութիւն էր ստանում, նրա շրթունքների վրայ, միևնոյն ժամանակ, խաղում էր մի համապատասխան ժպիտ, որը Շահի բանաստեղծին ասել էր տալիս թէ՝ «Հասան խանի դէմքը նմանում է Աղբ Դաղին: Երբ ամպերը ծածկում են նրա գագաթը, և դաշտի վրայ փայլում է արևը, դա նշան է որ սաստիկ փոթորիկ պիտի լինի»:

Նրա թշերի ներքեւ, ժամանակը փոքել էր երկու խոր ափսոսներ, որոնք չէին ծածկւում նրա ցանցառ մօրուքով, թէպէտ և նա բաւական հոգ էր տանում որ իր մօրուքը խտանար և ակօսները չերևային: Նոյն թշնամին զրկել էր նրան իր բոլոր ատամներից, բացի մէկից, որ դուրս էր ցցուել իր բերնից:

Յիրաւի, բոլորովին դժուար է ասել թէ, արդեօք նա դէմքով անելի նման էր միջի, թէ՞ վագրի, սակայն ամենայն վստահութեամբ պիտի ասած, որ ոչ մի մարդկային կերպարանք այնքան նման չէր գազանի դէմքի, ինչքան էր սարդարինը:

Նրա բնաւորութիւնը համապատասխան էր իր դէմքին, ոչ մի օրէնք—երկրային կամ երկնային—չէր կարող արգելք դառնալ նրա հեշտասիրութեանը, և երբ նրա կրքերը գրգռւում, բորբոքւում էին, էլ նրա խստութեանն ու անիրաւութեանը չափ ու սահման չկար:

Ի վերայ այդ բանայնի, նա օժտուած էր մի քանի յատկութիւններով, որոնցով նա շատ համակրելի էր դառնում իր շրջապատողներին: Նա առատաձեռն էր: Նա շատ ճարպիկ, սրամիտ և խորաթափանց էր: Նա այնպէս քաղաքագիտօրէն էր վերաբերւում դէպի Շահը, որ միշտ մեծ յարգանք և վստահութիւն էր շահում:

իշխանական փառքով և շքով էր ապրում նա, և յայտնի էր իր հիւրասիրութեամբ: Հակառակ իսլամական օրէնքի՝ նա շատ զեղծումներ էր գործում, սակայն նա ամենեւին չէր թագցնում այդ զեղծումները: Նա անկեղծ էր վարքի մէջ, քաղցր ու բարեհաճ էր դէպի իր ստորադասները, և խիստ մտերիմ բարեկամ էր նրանց՝ որոնք մասնակցում էին իր անառակութիւններին:

Ամբողջ Պարսկաստանում, չկար նրա պէս ազատ ու համարձակ գինի խմող, բացի, թերեւ, դահճապետից, որը կարծես թէ յաւիտեանական դաշն էր կնքել գինու տկի և իր բերանի միջև: Նա մի քանի օր ժուժկալում էր միայն այն ժամանակ՝ երբ Շահը ինչ-ինչ պատճառներով դժգոհում էր նրանից:

Ահա, այս երկու զարմանալի անձնաւորութիւնների առջևն էր, որ ես կանգնեցի իմ մարդկանցից մի-երկուսի հետ միասին: Նրանցից հեռու, սենեակի դրան մօտ, ես լուռ կանգնած մնացի մինչև որ դահճապետը սկսեց խօսել:

— Բնրի ես եկել, հաջի, ասաց նա: Ասա իսկոյն, քանի անհաւատ ուռսներ ես սպանել, քանիսնեւրի գլուխներն ես բերել, դէհ, ցոյց տուր տեսնենք:

— Ասա, հաջի, ի՞նչպէս ես տարել գործը, հարցրեց սարդարը: Սահմանազխում ուռսներ կան. մենք երբ կը հասնենք նրանց:

— Բա՛լի, բա՛լի ա՛ղաեօն (այո՛, այո՛, աղաներ), պատասխանեցի ես սովորական նախաբանից յետոյ: Ես ամէն ջանք գործ եմ դրել: Բարեբախտ էր այն ժամը՝ երբ մենք ճանապարհուեցինք, որովհետեւ ինչ որ դուք կամենում էք, պատրաստ եմ բացատրելու ձեզ: Եւ քանի որ սարդարն ու իմ իշխանաւոր դահճապետը բարեբախտ են եղել ինձ պէս մի ըստրուկ ունենալու, տարակոյս չկայ, որ նրանց բոլոր գործերը յաջողութեամբ պիտի պսակուեն և իրանք էլ կ'արժանանան աւելի մեծ փառքի, աւելի մեծ անուան:

— Բարեբախտութիւնը վատ բան չէ, ասաց սարդարը: Մենք լու գիտենք այդ. սակայն մեր յոյսը գլխաւորապէս մեր սրերի վրայ է դրուած: Այդպէս չէ, դարձաւ նա դահճապետին, պտոյտ տալով իր աչքի բիւրերը և ժպտալով նրա երեսին:

— Բա՛լի, բա՛լի, ասաց վերջինս. սուր ու թուր, վառօտ ու հրացան, նիզակ ու ատրճանակ—դրանք, այո՛, դրանք են մեր աստղագէտները, մեր բախտ վճռողները: Ես միշտ բախտաւոր եմ համարել ինձ և բախտաւոր կը համարեմ այն ժա-

մը՝ երբ թուրս կը մերկանայ, կը շողայ և մէկ հարուածով կը կտրի այդ անօրէններից մէկի վիզը: Ա՛խ, Թրբ, արդեօք Թրբ կը գայ այդ երջանկարար ժամը: Ես մի կիզիլ ըսաշ (կարմիր գլուխ) եմ, և ուրիշ ոչինչ: Ես ոչինչ չեմ ուզում, թող ինձ միշտ տրուի մի լաւ ձի, մի լաւ թուր, մի սուր նիզակ, մի լայն մէյդաւն (հրապարակ) որտեղ լինեն բազմաթիւ ուռաներ — էլ ուրիշ ոչինչ, ոչինչ չեմ ուզում:

— Բայց մի տիկ լաւ գինձն ինչ կ'ասես, հարցրեց սարդարը: Ինձ թուում է որ գինին էլ այդ քո ուղեցածների մէկը լինի՝ վատ չէր լինի: Սպասի՛ր, ես այս ըոպէիս ներս կը կանչեմ խալիֆին և կը հրամայեմ նրան մի բաժակ լաւ գինի տալ հաջուն: Բայց հաջի, դարձաւ նա դէպի ինձ, ասա տեսներք խիւր դու ի՞նչեր ես տեսել, ի՞նչեր ես արել: Ռուսները որտեղ են դիրք բռնել. նրանցից քանիսն են այնտեղ: Թնդանօթներ ունին նրանք, ձի է նրանց զօրագլուխը, ձրտեղ են կօզակները: Վարացիներից ի՞նչ լուր ունիս, ձրտեղ է նրանց ընդհանուր հըրամանատարը: Լեզգիներն ի՞նչ են անում, ձրտեղ է այն ուրացող Իսմայէլ խանը: Ասա, հաջի, պատմի՛ր մեզ այդ բոլորի մասին, և դու մի՛րզա՛, դառնալով իր գրագրին, արձանագրի՛ր ինչ որ հաջին կը պատմի:

Ես ինձ վրայ հաւաքեցի, և դէմքիս խիստ լըջութիւն տալով՝ ասացի.

— Երդուում եմ սարդարի հոգովը և դահճապետի աղովը, որ ուռաները ոչինչ են: Ես իմ աչքերով տեսել եմ նրանց, և վստահութեամբ կարող եմ ասել, որ միայն մէկ պարսիկ՝ նիզակը ձեռին՝ կարող է տասը նրանց պէս ողորմելի արարածներին սպանել:

— Ճշմարիտ որ դու առի՛ւծ ես, բացազանչեց դահճապետը, որին մեծ հրճուանք պատճառեց իմ ասածը: Ես միշտ ասել եմ որ դու մի պիտանի մարդ կը դառնաս: Սպահանցուն թող իր կամքին, և նա իր խելքով ու հնարագիտութեամբ ամեն բան կ'անի:

— Միայն մի քանի ուռաներ կան սահմանադիտում, շարունակեցի ես: Կարծում եմ հինգ, վեց, եօթը կամ ութ հարիւր, գուցէ և հազար կամ երկու հազար հոգի կը լինեն նրանք. բայց, իհարկէ, ո՛չ աւելի քան երեք հազար: Նրանք տասը, քըսան կամ երեսուն թնդանօթներ ունին. բայց նրանց կօզակները՝ — էհ, ոչինչ, ոչինչ են նրանք: Թէպէտ նրանք ամեն տեղ էլ երևում են, և կարող են սպանութիւններ անել իրանց հաստ նիզակներով որ աւելի նման են եզներ քշելու խթանների քան մի շնորհքով զէնքի, այնուամենայնիւ, իրանց ցաքուններով

(գրաստներով), նրանք ամենևին չեն կարող մրցել մեզ հետ, որ հեծնում ենք այնպիսի լաւ նօրյգներ, որոնց իւրաքանչիւրը կ'արժէ երեսուն, քառասուն, յիսուր թուման: Է՛հ, մինչև նրանց եւաքունները քայլ վերցնեն, մեր ձիերը, սւն, կը թռչեն, կը սլանան, կ'անյայտանան:

— Է՛հ, ինչո՞ւ ես դու էլ շունչդ վատնում կողակների մասին խօսելով, ասաց դահճապետը զգուանքով: Աւելի լաւ է արջերի վրայ նստած կապիկների մասին խօսել, քան այդ ուղորմելի, անբան արարածների: Ասա՛, տեսնենք, ո՞վ է այդ անօրէնների զօրագլուխը:

— Լաւ չգիտեմ. ինչ որ մէկը կայ, որին դէլի մայօր (գիժ մայօր) են կոչում: Նրան այդ անուն են տալիս, որովհետեւ, ասում են, նա երբէք խոյս չէ տալիս ասպարիզից: Նրա մասին շատ, շատ պատմութիւններ են անում: Իմիջի այլոց, ասում են, որ նորին գերազանցութիւն սարդարի ծոցի Ղորանը նրա հետն է, և նա ամեն մարդու ցոյց է տալիս այդ սուրբ գիրքը և ասում է, որ դա յաղթութեան մի թանգազին յիշատակ է:

— Բա՛նլի, ճշմարիտ է, բացազանչեց սարդարը: Այդ սընանկացած, քաղցած շները զարմացրին ինձ անցեալ տարի երբ մեր բանակը գտնւում էր հինգ Ֆարսաղ այնտեղից հեռու: Գիտե՞ս, նրանք այնպէս յանկարծակի յարձակուեցին մեր վրայ, որ ես շշկուեցի և հազիւ կարողացայ միայն վարտիկով ու շապիկով հեծնել մի տկլոր ձի և փախչել: Իհարկէ, այդ անիծեալները թալանեցին վրանս և իմիջի այլոց, տարան և՛ իմ Ղորանը: Բայց ես չեմ մոռանալ այդ. ես արդէն մի անգամ վրէժ եմ առել և մի լաւ դաս եմ տուել նրանց Ղամիշլու գիւղում, և դեռ շատ բաներ պիտի կատարեմ նրանց ծնողների գեօռների (գերեզմանների) վրայ: Է՛հ, վերջապէս, դու ասացիր քանի՞ թնդանօթներ ունին նրանք

— Չորս կամ հինգ կամ վեց, պատասխանեցի ես:

— Տօ՛, զարմարա՛լի բան, այդ ի՞նչ ես ասում, ի՞նչպէս ես խօսում նկատեց միրզան: Քիչ առաջ, դու ասացիր, քսան կամ երեսուն, ես էլ այդքան գրեցի, իսկ հիմա ասում ես հինգ կամ վեց: Արդեօք ո՞րն է ուղիղը:

— Ինչո՞ւ ես սուտ խօսում, ինչո՞ւ ես մեզ խաբում, բարկացաւ սարդարը, պտոյտ տալով իր աչքերի բիբերը: Լսի՛ր, հա՛ջի, երդւում եմ Ալիի գլխով, որ եթէ մենք ստուգենք, որ քո ասածների որեւէ մասը սուտ է, մենք քեզ ցոյց կը տանք որ մեր մօրուքների վրայ ծիծաղելը անպատիժ չի մնալ: Լըսում ես:

— Եթէ այդպէս է, ասացի ես, ուրեմն ինձ թոյլ տուէ՛ք

խոստովանել, որ այդ տեղեկութիւնները ինքս անձամբ չեմ հաւաքել: Դրանք բոլորովին ճիշտ են և ինձ հաղորդուած են մի հաւատարիմ հայ երիտասարդից, որին, յանուն սարդարի ես մի լաւ վարձատրութիւն եմ խոստացել: Այդ հայը իր կեանքը շատ վտանգներէ ենթարկելով՝ կարողացել է հաւաքել այդ լուրերը և հաղորդել ինձ:

— Ի՞նչ, դու վարձատրութիւն ես խոստացել, այն էլ իմ անունով բացագանչեց սարդարը: Ո՞վ է այդ հայը որ արժանի է վարձատրութեան:

Ի պատասխան այս հարցին, ես մանրամասնօրէն պատմեցի Յովսէփի պատմութիւնը, և սկսեցի պաշտպանել նրա դատը: Ես լիայոյս էի, որ սարդարը կ'ընդունէր հայ երիտասարդի կողմից իմ անեկիք պահանջը և ներելով նրան՝ իրաւունք կը շնորհէր՝ իր կնոջ հետ վերադառնալ իր հայրենիքը:

Երբ խօսքս վերջացրի, ինձ ոչինչ չսացին երկու իշխանները. միայն թէ ներկայ եղող մահմեդական կրօնաւորների շրթունքներից մի քանի անգամ դուրս թռան Ալլահ-ի Ալլահ բառերը: Սարդարն էլ մի-երկու անգամ իր աչքի բիւր պտոյտ տալով ասաց, — Այդ հայը հրաջքներ է գործել, և յետոյ բարձրաձայն հրամայեց իր ծառաներին մի դայլան կամ չիբուխ բերել, որ և իսկոյն մատուցուեց իրան:

Մի քանի շունչ ծխելուց յետոյ, նա ասաց.

— Ո՞րտեղ է այդ հայը. շուտ նրան կանչեցէք այստեղ: Խալիֆին էլ լուր տուէք իսկոյն ներկայանալ:

Այս հրամանի վրայ, Յովսէփին իսկոյն ներս բերին. բայց ի՜նչպէս. այնպէս հրելով ու քաջըջելով ինչպէս անում են որևէ հայի, երբ նրան հրամայւում է ներկայանալ մի պարսիկ բարձրաստիճանի մարդու: Նա կանգնեց սարդարի առաջ՝ տղամարդու այնպէս մի վստահ և անվախ դիրքով ու նայուածքով, որ բոլորն էլ զարմացան, մասնաւորապէս սարդարը, որ հաւանութիւն արտայայտող իր աչքերը նրա վրայ մի քանի վայրկեան սեւեռելուց յետոյ, դարձաւ դահճապետին՝ և պարսիկներին լաւ ծանօթ նշաններով արտայայտեց իր հիացումը:

Խալիֆը, որ մի ծանրաշարժ, հաստիկ և զուարթադէմ մարդ էր, վեղարը գլխին ներկայացաւ: Մի քանի բոպէ նրան իր առջև կանգնած պահելուց յետոյ, սարդարը վերջապէս, հրաւիրեց նրան նստել: Նա նստաւ, իհարկէ արտասանելով մեծարանքի և քաղաքավարութեան սովորական խօսքերը, և ծածկելով իր ձեռներն ու ոտները այնպէս՝ ինչպէս պատշաճ ու վայելուչ է այդպիսի դէպքերում:

Սարդարը յետոյ դառնալով նրան՝ ասաց.

— Փահ, փահ, պարզ երևում է որ մենք մուսուլմաններս շներից էլ պակաս ենք համարւում Իրանում: Այս ի՞նչ է. մենք այն տեղն ենք ընկել, որ հայերը այժմ աւազակների պէս մտնում են մեր հարեմները և հէնց մեր աչքի առաջ, արձակ-համարձակ գողանում են մեր կանայքն ու գերուհիները, և բացի դրանից, հրաւիրում են մարդկանց պղծելու մեր հայրերի գերեզմանները: Այս ի՞նչ խաբար է, խալիֆէ. արդեօք այդ բաները Ալլահի, թէ քի գործերն են:

Այս անակնկալ բամբասանքը այնպէս երկիւղ ու տառապանք պատճառեց խալիֆին, որ քրտինքը ծածկեց նրա լայն ճակատը: Նա փորձով գիտէր, որ այդպիսի զուր բամբասանքները առիթներ են կեղեքելու, տուգանքի ենթարկելու, և նա իմացաւ որ սարդարը մի փորացաւ ունէր. հետեապէս, նա խսկոյն պաշտպանողական դիրք բռնեց դիմադրելու նրան:

— Լճյ, այդ ի՞նչ էք ասում, սարդար, անդա, բացազանչեց խալիֆը: Ի՞նչ լեզուով էք խօսում դուք: Ո՞ւմ շներն ենք մենք հայերս, որ համարձակուենք մինչև անգամ մտածել այդպիսի չարիքի մասին, որ ձեր բարձրութիւնը հրամայում է: Մենք շահի հպատակներն ենք. դուք մեր պաշտպանն էք. հայերս ապրում ենք, խաղաղութեամբ ձեր հովանաւորութեան ներքոյ: Ես զարմանում եմ, չեմ հասկանում թէ այդ սիւ է, ի՞նչպիսի մարդ է նա՝ որ պատճառ է դարձել հողի ու մոխրի տակ անելու մեր գլուխները:

— Ահա, այդ մարդն է, ասաց սարդարը, մատնացոյց անելով Յովսէփին: Ասա, հայ տղայ, դժւ չես որ համարձակուել ես իմ հարեմից գողանալ գերուհուս:

— Եթէ ես, ո՞վ սարդար, իրօք յանցաւոր եմ, պատասխանեց Յովսէփը, եթէ ես դատապարտոււմ եմ նրա համար, որ իմ կնոջս եմ տարել, ահա պատրաստ եմ պատասխանատու լինել կեանքովս: Նա, որը ձեր հարեմի սենեակի պատուանից դուրս թռաւ և ինքն իրան իմ գիրկը ձգեց, նա՛ իմ կինն էր, նախ քան ձեր գերուհին դառնալը: Մենք երկուսս էլ—ես էլ կի՛նս էլ, Շահի հպատակներն ենք, և դուք ինքնիրդ էլ լաւ գիտէք թէ՛ արդեօք իրաւունք ունիք մեզ պէսներին—Շահի հպատակներին գերելու, թէ ոչ: Ճշմարիտ է, մենք հայ ենք, բայց մարդկային ազնիւ զգացումներ ունինք: Ամբողջ Պարսկաստանում, յայտնի է որ մեր մեծահռչակ Շահը երբէք բռնաբարութիւն գործ չէ՛ դրել նոյնիսկ իր ամենաստոր հպատակների հարեմի վրայ: Այս բանը լաւ գիտենալով, ես ի՞նչպէս էի կարող ենթադրել, որ դուք, ո՞վ ազնիւ սարդար, չէ՛ք պաշտպանիլ մեզ, մեզ՝ որ գտնւում ենք, ապրում ենք ձեր իշխանու-

Թեան ներքոյ: Ձեզ անտարակոյս խաբել են, երբ ասել են, թէ նա, այդ կիներ, որ դուք ասում էք, իբր թէ գողացուած է ձեր հարէմից, վրացի գերուհի է: Սխալ, բոլորովին սխալ են ձեզ հասկացրել, և ես քաջ գիտեմ, որ եթէ դուք յառաջագոյն իմացած լինէիք, որ նա ձեր հպատակ գիւղացիներից մէկի կինն էր, դուք երբէք չէիք սեփականացնիլ նրան:

Հայ երիտասարդի խօսելու տոնն ու ոճերը սարսափեցրին խալիֆին: Նա լռեցրեց նրան մի բարձր և զայրագին բացառանշունութիւնով. սակայն սարդարը, որին երիտասարդի համարձակ գիրքն ու լեզուն բոլորովին զարմացրին, փոխարէն բարկանալու ուրախացաւ և այնքան հիացմամբ նայեց նրան, որ կարծես թէ մոռացաւ, թէ ինչ բանի համար էր նրան իր մօտ կանչել:

Մոռանալով իր զայրոյթը՝ նա յանկարծ ընդհատեց Յովսէփի մասին տեղի ունեցող վիճաբանութիւնը և ասաց.

— Բաւական է, բաւական է, հայ տղայ, զնա, վերցրու կը նոյ՞ղ. և այլևս մի խօսիլ: Գանի որ դու մեծ ծառայութիւն ես արել մեզ, դու իմ անձնական ծառան պիտի դառնաս: Գնա, իմ աւագ ծառան քեզ հրահանգներ կը տայ պարտականութիւններդ մասին, և երբ դու կը հազնես պաշտօնիդ վայել զգեստը, իսկոյն կը վերադառնաս ինձ մօտ: Գնա և յիշիր, որ եթէ քո ապագայ վարքն ու ընթացքը լաւ լինի, դու կը շահես իմ կատարեալ ներողամտութիւնը, և բանդ լաւ կը լինի:

Այս խօսքերի վրայ հայ երիտասարդը երախտագիտական զգացումներով, բերկրալից ու խանդավառ սրտով առաջ վազեց, ծունկ չոգեց սարդարի առջև և համբուրեց նրա քղանցքը: Նա յիրաւի չէր հասկանում ինչ անել, ինչ ասել, ինչ բառերով արտայայտել իր սրտի անկեղծ գոհունակութիւնը այն անակնկալ բարեբախտութեան համար, որին արժանացաւ ինքը:

Զարմացած մնացին բոլոր ներկայ եղողները: Ո՛չոք այդպիսի բան չէր սպասում սարդարից: Դահնապետը վեր քաշեց իր ուսերը և սկսեց յօրանջել: Խալիֆն էլ, որ կարծես թէ աղատուեց մի ծանր, մի ճնշող բեռան տակից, դուրս ձգեց իր ոտները. նրա ճակատի վրայ ցոլացող քրտնքի կաթիլները ցածաքեցին, անհետացան, և նրա դէմքը կրկին ստացաւ իր սովորական զուարթութիւնը:

Բոլորն էլ ողջունեցին սարդարին իր գթասրտութեան և ժարդկութեան առթիւ և համեմատեցին նրան մեծահամբաւ Նուշիրուանին: Բարիբալլա՛ և մաշալլա՛ բառերը թռան բոլորի շրթունքներից, և սարդարի մեծահոգութեան համբաւը տարածուելով՝ զրոյցի առարկայ դարձաւ ամբողջ բանակում:

Նա չեմ ցանկանում բացատրել, թէ ինչեր էին սարդարի իսկական խորհուրդները. սակայն նրանք, որոնք լաւ ծանօթ էին նրա բնավորութեան հետ, համաձայնութեան եկան, որ նրա ցոյց տուած մեծահոգութիւնն ու գթասրտութիւնը ազնիւ դրդումներէից չէին յառաջացած:

ԳԼ. ԽԱՍ.

Հաջի Բաբան նկարագրում է, թէ իրանք ինչպէս յարձակուեցին ոռումների վրայ, եւ ցոյց է տալիս, թէ իր իշխանաւորը որքան վախկոտ մարդ է:

Ռուսների դիրքի և ղինուորական ոյժի վերաբերմամբ իմ և Յովսէփի հաղորդած տեղեկութիւնները ստանալուց յետոյ սարդարն ու դահճապետը վճռեցին անմիջապէս յարձակում գործել նրանց վրայ և հրաման արձակեցին, որ զօրքն իսկոյն արշաւէր դէպի Համամլու:

Ամեն բան շարժման մէջ ընկաւ: Թնդանօթակիր ուղտերը սկսեցին իրանց դանդաղ արշաւը լեռների միջով, հետեակ զօրքը առաջ քայլեց այնքան արագ, որքան կարելի էր, և դաշտը ծածկուեց հեծելազօրքի բաժան-բաժան խմբերով:

Մեր արշաւելուց առաջ Յովսէփն ինձ այցելեց: Նա այլևս առաջուան հայր չէր: Նրա ընդհանուր տեսքը բոլորովին փոխուած էր: Նա այլևս այն լեռնականը չէր իր վրացական չուխայով, մորթէ գլխարկով, սանդալներով, սուրը կախած իր գօտուց և հրացանը ուսին ձգած: Ո՛չ, նա բոլորովին այլ տարագով էր: Նա հագել էր մի երկար ծիրանեգոյն թաւշեայ պատմուճան՝ զարդարուած ոսկէ կոճակներով ու ժապաւէններով: Նրա մէջքին շնորհալի կերպով կապուած էր մի թանգագին քաշմիրի շալ. գլուխը ծածկուած էր մի պատուական Բուխարայի գառան մորթէ գլխարկով, որի ծայրը ներս էր ծալուած, և նրա ականջների ետևում երևում էին լաւ խնամքով սանրուած երկու գանգուրները:

Նրա գեղեցկակազմ ազդերը ծածկուած լինելով իր երկար պատմուճանի տակ, նա այժմ կնոջ էր նմանում, քան տղաժամարդու: Նա ինքն էլ կարծես թէ ամաչում, քաշում էր: Իր այլակերպութիւնն իրան էլ յատ խորթ էր թւում, որովհետեւ նա քաջըշտելով, ամաչելով մօտեցաւ ինձ:

Նա յայտնեց ինձ իր խորին շնորհակալութիւնը անպիսի արտայայտութիւններով, որ ցոյց էին տալիս, թէ ինքը որչափ երախտապարտ էր համարում իրան դէպի ինձ: Նա հաւաս-

տիացրեց ինձ, որ ինքն երբէք յոյս չունէր, թէ սարդարը այդպէս մեղմութեամբ ու ներողամտութեամբ կը վերաբերուէր գէպի իրան:

— Ես, ասաց նա, վճռել էի կնոջս հետ մեռնել, եթէ սարդարը ուրիշ կերպ վարուէր ինձ հետ: Այո, երբ ես այդպէս համարձակ խօսում էի նրա առաջ, ես արդէն յոյսս Վտրել էի իմ և կնոջս կեանքից. ես վճռել էի կամերկուսով մեռնել, կամ ազատուել: Ինչպէս, չնայած կեանքիս և բախտիս այս մեծ փոփոխութեանը, ինձ անտանելի է այս գոյութիւնը, այս տեսակ ապրելը: Վեհանձնութիւնս ինձ թոյլ չէ տալիս, որ սարդարի իշխանութեան ներքոյ գտնուող մի դատարկակեաց, յաւելուած մարդու անպատուաբեր անունը կրեմ վրաս:

— Դուք մի նեղացէք, շարունակեց Յովսէփը, մի բարկացէք, երբ ես ձեզ ասեմ, որ վճռել եմ շատ շուտով թողնել, մերժել, արհամարհել իմ պաշտօնս ու պատիւս: Քանի դեռ կնոջս կեանքը ապահովուած չէ, ես կը զիջանեմ, կը խոնարհուեմ, կը կատարեմ ամեն բան, ամեն հրաման. սակայն հէնց որ կնոջս ապահովուած տեսնեմ, իսկոյն մնաք բարով կ'ասեմ և կը հեռանամ: Աւելի լաւ, ճ, շատ աւելի լաւ է ինձ համար վրաց լեռներում թափառել, խոզարած լինել, ապրել մերկ, անտուն-անպատասպարան, քան հագնել թաւշեայ պատուական շորեր և մի անարգուած պորտաբոյծ և պնակալէզ մարդ համարուել— լինի այդ նոյնիսկ Պարսկաստանի ամենաշքեղ, ամենազեղխ պալատում:

Իր այդ գաղափարների համար հայ երիտասարդը արժանի էր գովասանութեան: Ես գովեցի նրան. բայց անչափ ուրախ կը լինէի, որ ես չլինէի նրա մտերիմ և գաղտնապահ բարեկամը, որովհետեւ եթէ նա փախչէր, մինչև մի աստիճան ես պատասխանատու կը ճանաչուէի նրա համար:

Վերջապէս մեր զօրքը առաջ էր արշաւում: Ելք մենք Աշտարակի մօտից անցնում էինք, Յովսէփը թոյլտուութիւն խնդրեց ինձանից գնալու և վերցնելու իր կնոջը, որը այժմ սարդարի ծառայութեան մէջ գտնուող և նրա շնորհը վայելող մարդու կինը դարձած՝ սկսեց մեծ պատուով ուղեկցել մեզ: Մի լաւ ձիււ վրայ նստած՝ նա գնում էր կանանց այն խմբի հետ, որ սովորաբար միշտ գտնուում են պարսկական բանակներում:

Մենք բանակեցինք Ղամիշլուի և Աբարանի մէջ տեղում: Այստեղ սարդարը հրամայեց, որ այնպիսի մարդիկ կամ իրեր, որ հարկաւոր չէին մեր յարձակման համար, մնային, մինչև զօրքը վերադառնար: Կարգադրուեց նաև, որ սարդարն ու դահ-

ճապետը իրանց զօրքերով և իւրաքանչիւրը երկու թնդանօթ-
ներով առաջ խաղային թշնամու վրայ:

Գիշերուան դէմ մենք ճանապարհուեցինք: Երբ մօտեցանք
պայքարի վայրին, սարդարի համբերութիւնը հատաւ, և ինչ-
պէս ամեն մի պարսիկ սովորաբար արհամարհական աչքով է
նայում հետեակ զօրքի պիտանութեան վրայ, նա էլ նոյն բանն
արեց, և կամք յայտնեց առաջ ընկնել միմիայն հեծեալզօրքով:

Դահճապետն էլ նրանից պակաս անհամբեր չէր: Նա դար-
ձեալ սկսեց իր քաջագործութիւններէ մասին խօսել՝ աշխա-
տելով բոլորիս հաւատացնել, որ բաւական կը լինէր միայն
ինքը երեւար թշնամու առաջ, և նրանք կը զարհուրէին,
կ'ընկճուէին. սակայն նա խոնարհուեց սարդարի կամքի առաջ,
և մնաց զօրքի վերջին բաժնի հետ գնալու:

Ես էլ իհարկէ ետ մնացի իմ իշխանաւորի հրամանները
կատարելու: Սարդարը դիտաւորութիւն ունէր Համամու հաս-
նելու արեւածագից առաջ, որպէսզի յանկարծակի բռնէր թշնա-
մուն, այդ պատճառով նա շեղուեց ուղիդ ճանապարհից՝ և մի
ուրիշ ուղի բռնեց, որպէսզի Փամբակի գետը կտրէր, անցնէր
առաջ:

Մենք էլ առաջ արշաւեցինք ուղակի դէպի գետի ափը:
Ինչպէս մեզ պատուիրուած էր, մենք պէտք է հէնց արեւածագին
հասնէինք այնտեղ, որպէսզի օգնութեան հասնէինք սարդարին,
եթէ ի դէպ թշնամիները նրան ետ քշէին: Արեւ ծագում էր, երբ
մենք հասանք գետի ափը: Դահճապետին հետևում էր հինգ
հարիւր հոգուց բաղկացած մի հեծեալզօրք: Հետեակ զօրքն էլ
գալիս էր յետևից:

Մենք պատրաստուում էինք գետն անցնելու, երբ յանկարծ
մի ձայն լսուեց գետի միւս ափից: Այդ ձայնը կրկնուեց մեզ
անծանօթ մի քանի բառերով, և յետոյ լսուեց մի հրացանի
որոտ: Մենք կանգ առանք և դահճապետի ուշադրութիւնը հրա-
ւիրեցինք գետի միւս ափի վրայ: Նա նայեց այնտեղ, դէմքը
դեղնեց, մեռելատիպ դարձաւ:

— Ի՞նչ խաբար է, ի՞նչ է պատահել, հարցրեց նա մի
ձայնով, որ սովորական աստիճանից շատ ցած էր: Ի՞նչ ենք
անում մենք, հօջի, հէր ենք գնում. դժէ էիր, որ կրակեցիր:

— Ո՛չ, պատասխանեցի ես, գուցէ այստեղ ղուլըր են թա-
փառում ուռաների մէջ, ինչպէս Աշտարակում թափառում են հա-
յերի մէջ:

Մի րոպէից յետ դարձեալ մի քանի վայրենի ձայներ լը-
սուեցին. մի ուրիշ հրացան կրակուեց, և արեւը, որ այժմ բա-
ւական բարձրացել էր, ցոյց տուեց մեզ գետի միւս ափում

կանգնած երկու մարդ, որոնք, ինչպէս իմացանք, ոռւմներ էին։
Հէնց մեր զօրագլուխը տեսաւ, որ վտանգն այնքան էլ
մեծ չէր, նաև նկատեց, որ մեր դիմացի թշնամիները շատ սա-
կաւաթիւ են, դէմքը պայծառացաւ, և նա իսկոյն ցոյց տուեց
մեծ վճռականութիւն, արիութիւն և կորով։

— Գնացէ՛ք, բռնեցէ՛ք, զարկեցէ՛ք, սպանեցէ՛ք դրանց, գո-
ռաց նա մէկ շնչով։ Գնացէ՛ք և իսկոյն այդ երկու անօրէնները
գլուխները բերէ՛ք այստեղ։

Իսկոյն մի քանի ձիաւորներ մերկացրած սրերով մտան
գետը. բայց միւս ափի երկու ոռւմները քիչ ետ քաշուելով մի
բարձրութեան վրայ և յարմար դիրք բռնելով՝ սկսեցին այն-
պէս կանոնաւոր և անյողդողդ կերպով կրակել իրանց հրացան-
ները, որ մենք բոլորովին զարմացանք։ Զիաւորներից երկուսը
սպանուեցին և միւսները սոսկալով ետ դարձան։ Այլևս ոչ ոք
չկամեցաւ, չհամարձակուեց յարձակուել այդ երկու ոռւմների
վրայ։

Դահճապետը հայոյեց, երդուեց, խնդրեց, փող խոստա-
ցաւ իր զօրքին, որ յարձակուեն նրանց վրայ և նրանց գլուխ-
ները բերեն իր համար, սակայն ոչ ոք չշարժուեց իր տեղիցը։
Վերջը նա իբր թէ մեծահոգութեամբ գոռաց.

— Ո՛չոք չէ՞ ցանկանում, հմ. ես, ես ի՞նքս կ'երթամ։ Դէհ,
ճանապարհ բաց արէ՛ք. ահա ես գնում եմ. բայց ոչ ոք չէ՞ ցան-
կանում հետեւել ինձ։

Յետոյ կանգ առնելով և դառնալով ինձ՝ ասաց.

— Հնչի, հոգիս, բարեկամս, դու չե՞ս գնալ կտրելու այդ
անհաւատների գլուխները։ Գնա, հոգիս, գնա, ի՞նչ որ ուզես,
ես քեզ կը տամ։

Եւ իր բազուկը վզիս շուրջը ձգելով՝ նա կրկնեց.

— Գնա, հնչի, գնա, գնա, ես վստահ եմ, որ դու կարող
ես դրանց գլուխները կտրել։

Նա դեռ խօսում էր ինձ հետ, երբ գետի հակառակ ափից
մի հրացան որոտաց և գնդակը դիպաւ նրա ասպանդակին։ Նա
սարսափեց. յետոյ սկսեց լուտանքների կարկուտներ տեղալ
ոռւմների գլխին։ Նա հրամայեց իր զօրքին ետ քաշուել. ինքն
էլ շուտ-շուտ ետ քաշուելով՝ բացագանչեց.

— Անէ՛ծք, հազար անէ՛ծք այդ անհաւատների մօրուքնե-
րին։ Անէ՛ծք նրանց հայրերին, մայրերին, պապերին և ապա-
գայ սերնդին։ Ո՞վ էր տեսել այս ձևով կտուել։ Այդ անիծած-
ները հա սպանում, սպանում ու սպանում են մեզ։ Մէկ տե-
սէ՛ք ի՞նչ անասուններ են դրանք։ Ի՞նչ ուզում էք, նրանք իսկի
չեն վախենայ, չեն փախչի։ Այդ հարամզադէները զազաններ

են. բայց գաղաններին էլ վատթար են, որովհետև գաղանները զգացում ունին, իսկ դրանք չունին: Ալլահ-ի-Ալլահ, հշմարիտ եմ ասում, որ եթէ կոուի մէջ սպանուել, մեռնել չլինէր, օ, պարսիկներս մեծ քաջութեամբ կը կոուէինք և յաղթութիւնը մենք կը տանէինք:

Արդէն բաւական հեռացած լինելով գետի ափից՝ մենք կանգ առանք: Դահճապետը կարծում էր, որ բազմաթիւ ուռաներ մէջք-մէջքի տուած՝ թաղնուած էին մացառների մէջ, նա չէր հասկանում ինչ միջոցներ ձեռք առնել. բայց հէնց որ մենք տեսանք, որ սարդարն էլ միւս կողմից իր հեծելազօրքով փախչում էր թշնամու առաջից, նա էլ իր անելիքը իմացաւ:

Պարզ էր, որ սարդարը անյաջողութեան էր հանդիպել, և որ ամբողջ զօրազնդի համար հչինչ չէր մնում անելու բացի դէպի բանակը վերադառնալուց:

Ես չեմ փորձիլ պատկերացնելու սարդարի զօրքի թըշուառ վիճակը. միայն այսքանը պիտի ասեմ, որ նրանք բոլորն էլ կարծես թէ լուռ համաձայնութեամբ վճռել էին քայլել դէպի իրանց տները առանց մի անգամ ևս ետ նայելու:

Բայց դահճապետը, օ, նա խիստ ոգևորուած էր: Նա այնքան աշխուժով, եռանդով և ինքնաբաւականութեամբ պատմում էր իր արիւնթեան, իր ոտին դիպած գնդակի ու նրա պատճառած վէրքի և իր ապագայում կատարելիք քաջագործութիւնների մասին, որ նա յանկարծ ձին քշեց և հասնելով իր խոհարարին, որը արագ-արագ գնում էր իր կաթսաների մօտ, այնպէս քաջութեամբ իր նիզակը նետեց նրա մէջքին, որ շալը ծակելով՝ նրա մսի մէջ մտաւ:

Եւ այսպէս վերջացաւ մեր արշաւանքը, որից սարդարը յոյս ունէր շահելու մեծ փառք ու բազմաթիւ ուռաների գլուխներ, և որը առիթ պիտի տար դահճապետին մինչև իր կենսաքի վերջը հրճուելու ու պարծենալու իր սխրագործութիւններով: Չնայած որ այդ արշաւանքը բոլորովին անյաջող, ապարդիւն անցաւ, այնուամենայնիւ նա՝ դահճապետը բաւական ողջամտութիւն ունէր նիւթ ստեղծելու ինքնաշնորհաւորութեան համար: Շրջապատուած մի խումբ հետևորդներով, որոնց մէջն էի և՛ ես, նա պարծանքով խօսում էր իր քաջագործութիւնների մասին, երբ յանկարծ մի պատգամաւոր հասաւ սարդարի կողմից և ասաց նրան.

— Սարդարը խնդրում է, որ թոյլ տաք Հաջի Բաբային իսկոյն իր մօտ գնալու:

Պատգամաւորն ու ես միասին ճանապարհ ընկանք, և երբ ես ներկայացայ սարգարին, նա հարցրեց.

— Հաջի, ո՛ւր է հայ երիտասարդը, ո՛ւր է նրա կինը. ասա, իսկոյն պատասխան տուր:

Ես անմիջապէս հասկացայ, որ նրանք արդէն փախել էին. Դէմքիս անմեղութեան արտայայտութիւն տալով՝ ես ասացի, որ բոլորովին չգիտէի, թէ նրանք ո՛ւր էին:

Սարգարը պտոյտ տուեց իր աչքերի բիւրբը և բերանը. զանազան ձևերով ծռմոց: Կիրքը բռնկեց նրա կրծքից ամենալալիրշ արտայայտութիւններով: Նա երդուեց վրէժ առնել նրանից, նրա ազգից, նրա հայրենի գիւղից, նրա հետ առնչուած թիւն ունեցող ամեն շնչաւոր և անշունչ բաներից: Նա բոլորովին չհաւատաց, որ ես ոչինչ չգիտէի նրա ո՛ւր լինելու մասին: Նա սպառնաց ինձ, որ եթէ երբեք չբանից դուրս գար, որ ես Յովսէփի փախչելու դիտաւորութեան մասին առաջուց գիտէի, նա ամեն միջոց գործ կը դնէր աշխարհիս երեսից ջնջելու ինձ:

Ես յետոյ լսեցի, որ նա մի խումբ մարդիկ էր ուղարկել Ղամիշլու ձերբակալելու Յովսէփի ծնողներին ու մերձաւորներին: Նա հրամայել էր նաև գրաւել նրանց բոլոր կալքը և հրդեհել ու կործանել, ինչ որ դժուար կամ անհնար էր փոխադրել, սակայն հնարագէտ, ճարտարամիտ և գործունեայ հայ երիտասարդը նախատեսելով այդ արհաւիրքը՝ այնպէս խոհեմութեամբ և փութաշանութեամբ կարգադրել էր ամեն բան, որ նա բոլորովին ընկճեցրեց, նուաճեց սարգարին և թոյլ չտուեց, որ բռնակալի չար նպատակը իրագործուէր:

Բայց թի՛չ էր արել նա: Նա, իր կինը, իր կնոջ ազգականները, իր ծնողները և մերձաւորները, վերցնելով իրանց շարժական գոյքերը, բացի իրանց մշակած արտերից, համեքաշխ սրտով գաղթել էին ոռոսաց հողը:

Եւ նրանք յաջողութեան էին հանդիպել, որովհետև, ինչպէս ես յետոյ լսեցի, ոռոսաց հողում նրանք սիրալիր ընդունելութիւն էին գտել թէ կառավարութեան և թէ իրանց համազգիների կողմից: Նրանց յատկացրուել էր մի կտոր գետին և ամեն կերպ օգնութիւն արուել վերահաստատուելու և լըրացնելու իրանց պակասը:

Գլ. խը.

Հաջի Բարան գնում է Շահի քանակը:— Ստախոսութեան մի փայլուն օրինակ է տալիս նա:

Դահճապետի սպառնալիքները մտքումս՝ ես տարակուսանքով ու վախենալով վերադարձայ նրա մօտ: Ես լաւ գիտէի, թէ մեր մեծ մարդիկը ինչքան իրաւունք և ոյժ ունին իրանց ծառաների վրայ, ուստի ես խոհեմութիւն համարեցի առանց ուշացնելու յայտնել նրան, թէ սարդաբը ինչ տոնով և ինչ ուճով էր խօսել հետս:

Նա զայրացաւ, մոլեգնեց, և ինձ մնաց միայն հովահարել վառածս կրակը՝ թշնամութիւն ստեղծելու նրանց մէջ: Ես սարդարից աւելի շատ էի վախենում, քանի որ գիտէի, թէ դահճապետը այնքան զօրաւոր չէր նրա առաջ, որ կարողանար ինձ պաշտպանել. ուստի խոհեմութիւն համարելով հեռանալ նրանց մէջ բացուելիք տեսարանից՝ թախանձանօք թոյլտուութիւն խնդրեցի դահճապետից վերադառնալու Թէհրան:

Սարդարին ապացուցանելու համար, որ բացի իրանից ոչ ոք իրաւունք չունէր իշխելու իր ծառայի վրայ, դահճապետը հաճեց իմ խնդրած թոյլտուութիւնը շնորհել: Նա իսկոյն ինձ հրահանգներ տուեց, թէ ես ինչ պիտի ասէի մեծ վէզիրին մեր վերջին արշաւանքի վերաբերմամբ. նա յատկապէս պատուիրեց ինձ, որ որչափ կարելի կը լինէր, փայլուն գոյներով նըկարագրէի իր արիւթիւնն ու քաջագործութիւնները:

— Հնչի, դու ինքդ այնտեղ էիր, ասաց նա, և կարող ես նկարագրել պատերազմի անցքերը ճիշտ այնպէս, ինչպէս ես ինքս կը նկարագրէի: Անշուշտ ճշմարտութիւնից քիչ հեռու կը լինի, եթէ ասենք, որ մենք յաղթութիւն տարանք, որովհետեւ, ափսոս, մենք գլուխներ չունենք, որ ցոյց տանք. բայց միևնոյն ժամանակ, ոչոք էլ չէ կարող ասել, թէ մենք յաղթուի ենք: Դու կը պատմես վէզիրին, որ սարդաբը՝ այդ յիմար, ապուշ աւանակը փոխարէն սպասելու մինչև թնդանօթներն ու հետևակ զօրքը օգնութեան հասնէին, յիմարաբար յարձակուեց մի պարսպապատ քաղաքի վրայ՝ ամբողջ իր յոյսը հեծելազօրքի վրայ դնելով: Հետևանքն այն եղաւ, որ այդ քաղաքի պահապան զօրքը դնեցրը փակելով՝ բարձրացաւ պարիսպնորի վրայ և այնտեղից սկսեց կրակ թափել սարդարի վրայ:

— Չմոռանաս ասել, շարունակեց նա, որ նա ոչինչ չկարո-

դացաւ անել և խայտառակութեամբ վերադարձաւ: Եթէ, հնչի, ես լինէի ձեր ընդհանուր հրամանատարը, հանգամանքները բոլորովին տարբեր կը լինէին, այսինքն՝ դէ, դու ինքդ լաւ գիտես, որ ես յաղթութիւն կը տանէի. գիտես նաև, որ մենակ ես էի, որ կուրծքս թշնամուն դէմ արած՝ կռուեցի մինչև վերջ: Ես սաստիկ վիրաւորուեցի. բայց եթէ գետը արգելք չդառնար, ես չէի թողնիլ, որ ռուսներէց մէկը կենդանի փախչէր: Հնչի, այս բոլորը դու պիտի պատմես վէզիրին և որքան կարող ես, դեռ աւելին պատմիր:

Յետոյ յանձնելով ինձ մի քանի նամակներ՝ ուղղուած մեծ վէզիրին ու միջանի ուրիշ պաշտօնական մարդկանց, նաև մի արիզէ (խնդրագիր) Շահին ուղղուած, նա հրամայեց ինձ հեռանալ:

Ես մեկնեցի: Ճանապարհին տեղեկացայ, որ թէպէտ աշունքից էլ բաւական անցել էր, Շահը դեռ ամառանոցումն էր, բայց գիտաւորութիւն ունէր շուտով Թէհրան վերադառնալու:

Միջանի ուրիշ սուրհանդակների հետ միասին, որոնք եկել էին Շահի թագաւորութեան զանազան կողմերից, ես ներկայացայ մեծ վէզիրին առաւօտեան ան ժամին, երբ նա սովորաբար շրջապատուած է լինում իր պաշտօնեաներով, և նամակները նրան յանձնեցի:

Նամակները լաւ ուշադրութեամբ կարդալուց յետոյ նա հրամայեց ինձ մօտենալ իրան և սասց.

— Խօշ ամէղի (բարի ես եկել). դու էլ էիր գնացել Համալու: Հը՛մ, այդ անհաւատները չհամարձակուեցին ղզլըաշների (կարմիր գլուխների) առաջ դուրս գալ: Հը՛մ, այդպէս է. ոչոք չէ կարող կանգնել պարսիկ ձիաւորի և պարսկական շամշիրի (թրի) առաջ: Քո խանը վիրաւորուել է, չէ՞: Օ՛, նա իսկապէս Շահի ամենալաւ ծառաներից մէկն է. բայց լաւ է, վատ բան չէ պատահել նրան: Ինչպէս երևում է, դուք շատ տանք գործ էք ունեցել գետի երկու ափերում:

Այս բոլորին ես, քանի անգամ որ հարկաւոր էր, պատասխանեցի միայն Ըա՛լի-Ըա՛լի (այո՛, այո՛) և Խէ՛յր-Խէ՛յր (ոչ, ոչ) բառերով, և յիշաւի, ես բաւական գոհ եղայ նրա համար, մեծ վէզիրն ինձ վրայ նայում էր իբրև մէկի վրայ, որ հէնց նոր մեծ յաղթութեամբ վերադարձել էր պատերազմի դաշտից:

Վէզիրը յետոյ իր միրզաներից (զրագիրներէց) մէկին կանչելով՝ ասաց.

— Լսիր, միրզա՛. դու պէտք է պատրաստես մի ֆաթէ

նամէ *), որի օրինակները պիտի իսկոյն ուղարկուեն զանազան նահանգներ, յատկապէս Պորասան, որպէսզի ապստամբ խաները սարսեն ու դողան: Աշխատիր նկարագրական այնպիսի վսեմ ոճերով գրել, որ քո յաղթական ինքնակալի բնաւորութեանը և արժանաւորութեանը համապատասխան լինի: Այս բոլորն մենք կարօտ ենք մի յաղթութեան, բայց իհարկէ մի լաւ, ճշմարիտ և արիւնալից յաղթութեան:

— Թշնամիները քանի հոգի էին, հարցրեց միրզան՝ նայելով դէպի ինձ:

— Շատ, շատ, պատասխանեցի ես՝ միևնոյն ժամանակ զանդաղելով ու մտածելով թէ ինչ թիւ ասեմ:

— Գրիւր յիսուն հազար, ասաց վէզիրը պաղ կերպով:

— Նրանցից քանիսն են սպանուել, հարցրեց միրզան՝ նախ նայելով վէզիրին, յետոյ ինձ:

— Գրիւր տասն, տասն և հինգ հազար հոգի սպանուած, ասաց վէզիրը: Մտածիր, որ այդ ֆաթէ նամէները շատ հեռու տեղեր պիտի գնան: Շահի արժանաւորութիւնը կը վիրաւորուի, եթէ յայտարարուի, որ հազարներից ու տասն հազարներից պակաս են սպանուել: Ի՞նչ, դու կարծում ես, թէ Շահը Բոսթամից և Աֆրասիաբից պակաս մարդ է: Ո՛չ, մեր թագաւորները արիւնախում և մարդասպան մարդիկ պիտի լինին, որպէսզի նրանց հպատակներն ու օտար ազգերը ակնածութեամբ ու երկիւղով վերաբերուեն դէպի նրանց: Է՛հ, վերջապէս, գրեցիր, հարցրեց նա միրզայից:

— Բա՛լի, բա՛լի, ձերդ բարձրութիւն, պատասխանեց միրզան: Ես գրել եմ, որ (կարդալով հրովարտակը) ռուս շները— Ալլահը ցիցը հանի և խորովի նրանց կենդանի կրակի վրայ— Թուով յիսուն հազար, յանդգնեցին պատերազմել մեզ հետ հարիւր թնդանօթներով, բայց հէնց որ Շահի ամենայաղթ զօրքերը երևացին, նրանցից տասը-տասն և հինգ հազար հէնց տեղնուտեղը սարսափից մեռան, և մնացածները գերի ընկնելով մեր ձեռքը, այսօր գերիների գինը հարիւրին հարիւր իջել է ամբողջ Ասիայի թագարներում (շուկաներում):

Բարիքալա՛, բարիքալա՛, միրզա՛, բացազանչեց մեծ վէզիրը. շատ լաւ ես գրել: Եթէ գրածներդ իրողութիւն էլ չըլինին, այնուամենայնիւ Շահի բարի բախտի բերմամբ իրողութիւն կը դառնան: Ճշմարտութիւնը շատ լաւ, շատ պատուական բան է, երբ նպաստում է մարդուս նպատակների ի-

*) Յաղթութիւն յայտարարող մի հրովարտակ:

բագործմանը, հակառակ դէպքում դա նշանակութիւն չունի, դա շատ անմիտ, անպէտք բան է:

— Բա՛լի, ասաց միրզան՝ գլուխը բարձրացնելով իր ծնկի մօտից, որի վրայ իր ձեռքը դրած՝ գրում էր հրովարտակը: — Բա՛լի, կրկնեց նա. Սաադին ասում է. — «Ստախուսութիւնը քարի նպատակների համար անլի լաւ է, քան ճշմարտութիւնը, որ կոհի է առաջացնում»:

Վէզիրն իր կօշիկներն ուզեց: Ծառաներն իսկոյն բերին, նա հագաւ և հեծնելով իր ձին, որ պատրաստ էր վրանի դըրան, գնաց շահի մօտ, հաղորդելու նրան իր ստացած նամակները բովանդակութիւնները:

Սառնուելով նրան հետևող ծառաների խմբի հետ՝ ես բաւական ճանապարհ քայլեցի նրա յետևից, մինչև որ նա յանկարծ հտ նայեց և ինձ տեսնելով՝ ասաց.

— Դու մուրախաս (ազատ) ես. գնա հանգստանալու:

Գլ. խգ.

Հացի Բաբան մի զարհուրեցուցիչ պատմութիւն է անում. — Ինքը վերին աստիճան թշուառնում է:

Մի քանի օրից յետոյ Շահը չուեց դէպի Թէհրան իհարկէ նոյն շքով ու փառքով, ինչպէս որ մեկնել էր:

Պաշտօնիս գլուխն անցած՝ ես, իբրև դահճապետի օգնական, զբաղուած էի հրահանգներ տալով իմ իշխանութեան տակ գտնուող նասաղչիներին ճանապարհին կարգ պահպանելու համար, երբ ինձ հրամայուեց իսկոյն մի մարդ ուղարկել Թէհրան, լուր տալու ըագիգէրներին (խաղացողներին), կաքաւչուհիներին և երգչուհիներին, որ պատրաստուէին ընդունելու Շահին Սուլէյմանիէում, որը, ինչպէս առաջ էլ ասել եմ, մի պալատ է՝ կառուցուած Գեարաջ գետի ափի վրայ, մօտաւորապէս իննը ֆարսաղ մայրաքաղաքից հեռու:

Յիշողութեանս մէջ իսկոյն զարթնեց իմ երկմը մոռացուած Ձինաբը, և ահա, բոլոր իմ փափուկ զգացումները, որ շնորհիւ իմ վարած եռուն կեանքի թմրել, ներհել էին, նորոգուեցին, կենդանացան: Արդէն անցել էին եօթն ամիսներ այն օրից, երբ մենք առաջին անգամ ծանօթացանք միմիանց հետ, և թէպէտ այդ ժամանակի ընթացքում ես ապրել էի այնպիսի մարդկանց շրջանում, որոնք իրանց վայրենի բնաւորութեամբ մեռցրել էին իմ մէջ ամեն ազնիւ, փափուկ զգա-

ցում, այնուամենայնիւ չգիտեմ թէ ինչն էր ինձ երեւակայել տալիս, որ նրա՝ Զինաբի դրութիւնը խիստ թշուամո, ողբալի՜ պիտի լինէր: Ինձ թւում էր, թէ նրա այդ եղկելի վիճակի պատճառը հէնց ինքս էի եղել, և ամեն անգամ երբ նա միտքըս էր ընկնում, խեղճս տանջում, հալածում էր ինձ, և սիրտս կարծես թէ ուռչում, տրաքում էր:

— Է՛, ախր շուտով մի բան կը յայտնուի ինձ նրա մասին, մըմնջացի ես. տեսնենք թէ նրա մասին իմ ունեցած տանջուող երկիւղն ու կասկածները հիմք ունի՞ն, թէ՞ չէ: Մի քանի օրից յետոյ մենք կը հասնենք Սուլէյմանիէ. այնտեղ ես կը ստուգեմ նրա իսկական դրութիւնը:

Մեր հասնելու օրը ես բոլորից առաջ ընկայ՝ տեսնելու, թէ արդեօք պալատում ամեն բան պարտուպատշաճ կերպով պատրաստուած ու կարգադրուած էր, թէ՞ չէ: Երբ մօտեցայ հարեմին, լսեցի երաժշտութեան ձայներ, և ես իսկոյն եղրակացրի, որ բոլոր ըագիգէրները արդէն պատրաստ էին այնտեղ: Ա՛խ, ինչքոր չէի տալ մի միջոց, մի հնարաւորութիւն գտնելու Զինաբի հետ խօսելու կամ գոնէ նրան հեռուից տեսնելու համար: Սակայն ես լաւ գիտէի, որ անխոհեմութիւն կը լինէր իմ կողմից նրա մասին հետաքրքրութիւն ցոյց տալ, որովհետեւ ես կասկածներ կը յարուցանէի և ակամաօրէն ինձ էլ, նրան էլ մահուան վտանգի կ'ենթարկէի:

Եւ յիշուի, եթէ նոյնիսկ վճռէի նրան մի եղանակով, մի հնարով տեսնել, դարձեալ իզո՞ւր, բոլորովին իզո՞ւր կը լինէր, որովհետեւ շուտով մի փոքրիկ թնդանօթի ձայն յայտարարեց, որ Շահը պալատի դուռը հասած՝ իջնում էր ձիուց:

Իր պետական դահլիճում մի դայլան ծխելուց յետոյ նա արձակեց իր պալատական պաշտօնեաներին և անցաւ դէպի հարեմը, որի մուտքին մօտեցաւ թէ չէ, իսկոյն լսուեց երգչուհիներ, թմբուկներ և կիթառների ձայներ: Նրա առաջ թափօր կազմելով՝ երգչուհիները նրան ներս առաջնորդեցին, օդը թնդացնելով իրանց երաժշտութեամբ:

Ես ականջներս սրեցի լսելու Զինաբի ձայնը. սակայն իզո՞ւր: Յուսոյ և երկիւղի մէջ տատանւում էի, մինչև լսեցի, որ Շահը հրամայել էր իսկոյն իր մօտ կանչել պալատական բժիշկ Միրզա Ահմադին:

Այդ բանը լսելով, սարսուռ անցաւ երակներիս միջով, և ես մըմնջացի.

— Կորաւ, Զինաբը կորաւ իսպառ:

Հաջիմ բաշին իսկոյն եկաւ, մտաւ հարեմը, և շուտ դուրս եկաւ: Անցնելիս ինձ տեսնելով նա մի կողմ տարաւ ինձ, և ասաց.

—Հնչի, Շահը սաստիկ զայրացած է: Դու յիշում ես այն քրդուհուն, որին ես ընծայեցի նրան նոր տարուայ առթիւ իմ նրան տուած խնջոյքի օրը: Նա չէ մասնակցել կաքաւչուհիներին՝ պատրուակելով, թէ հիւանդ է: Շահը հրաապ սիրով սիրում է նրան: Նա ինձ կանչեց իմանալու, թէ ինչ բանի է վերագրելի նրա այդ վարքը. կարծես թէ ես կարող եմ սանձել այդ դէի զաւակ, քմահաճ աղջկան: Նա ինձ սպառնում է, որ եթէ մինչև իր Թէհրան հասնելը այդ անիծուած քրդուհին կատարելապէս առողջացած ու գեղեցկացած չլինի, արմատախիւ կ'անի մօրուքս: Ա՛խ, սև լինէր, անիծուէր այն օրը, այն աղէտաբեր ժամը, երբ նա՝ այդ սատանայի ձագը ձեռքս ընկաւ, և աւելի սև լինէր այն ժամը, երբ ես առաջին անգամ Շահին հրաւիրեցի տունս:

Այս ասելով՝ միւր զա Ահմադը հեռացաւ Թէհրան դնալու, իսկ ես դարձայ իմ վրանը խորհելու այն սոսկալի դրութեան վրայ, որին վիճակուած էր տարաբախտ քրդուհին:

Ես աշխատեցի ինձ սիրտ տալ և յուսալ, որ Զինաբը դուցէ իրօք հիւանդ է, և թէ այդ պատճառով նա անկարող է եղել երևալու Շահի առաջ: Ես ինձ միխթարեցի այն մտածմունքով, թէ եթէ նա իսկապէս հիւանդ է, թերևս հաքիմ բաշին կը դըթայ նրան և կ'աշխատի մի եղանակով արդարացնել նրան: Սրտիս խորին տխրութիւնը փարատելու համար, ես երգեցի ինձ նման իր սիրուհուց զրկուած մեր բանաստեղծներից մէկի հետեւեալ խօսքերը.

«Միթէ այս աշխարհում միայն մէ՞կ զոյգ ջէյրանի աչքեր կան, միթէ միայն մէ՞կ չինարի բօյ կայ, միթէ միայն մէ՞կ լուսնանման երես կայ, որ ես այսքան ողբում եմ իմ անգութ սիրուհու կորուստը: Ո՛հ, ես պիտի սիրեմ այնտեղ, ուր սէրն աժան է, որովհետև ես ժլատ եմ իմ զգացմունքների մէջ: Այլևս ինչո՞ւ այրուեմ, բորբոքուեմ, մաշուեմ և վշտալից սրտով անքաշեմ ինձ դիւթող, բայց խուլ աղջկայ պատուհանի տակ»:

Այսպէս ես աշխատեցի շատ էլ չմտածել սիրտս տոչորող խնդրի վրայ և վճռեցի իբրև մի ճշմարիտ մուսուլման արհամարհանքով վերաբերուել դէպի կին սեռը. բայց աւանդ, ուր էլ որ գնում էի, որ կողմն էլ որ դառնում էի, Զինաբը իբրև մի յօշոտուած, խողխողուած դիակ՝ միշտ երևում էր աչքիս առաջ. իր այդ սոսկալի դրութեամբ նա ամեն տեղ և ամեն ըրպէ երևում էր ինձ:

Վերջապէս յայտարարուեց Շահի Թէհրան մուտ գործելու բարեբեր ժամը, և նա մտաւ քաղաքը շրջապատուած բոլոր բնակիչներով, որոնք դուրս էին ուղարկուել զիմաւորելու նը-

բան: Ես տենչում էի տեսնուել հաքիմ բաշու հետ, սակայն այնպիսի մի ձևով, որպէս թէ պատահմամբ հանդիպեցի նրան, որպէսզի եթէ Զինաբը յանցաւոր համարուէր, ինձ չկասկածէին իբրև պատճառ նրա յանցանքի...

Մեր թէհրան հասնելու օրը հէնց երեկոյեան բաղձանքըս կատարուեց, բայց ամող, ինչպէս ձախողակի կերպով Այսպէս պատահեց. մինչդեռ ես տեսայ Միրզա Ահմադին, որը ցաւ ու հոգս արտայայտող դէմքով, մէկ ձեռքը գօտու մէջ խրած, միւսը կողքին դրած, մէջքը սովորականից աւելի կռացած, և աչքերը դէպի գետին դարձած՝ դուրս եկաւ շահի առանձնասենեակից, ես իսկոյն կանգնեցի նրա ճանապարհի վրայ և ողջունեցի նրան: Նա վեր նայեց և ճանաչելով ինձ՝ կանգնեց ու ասաց.

— Ես հէնց քեզ էի ուզում տեսնել. եկ այս կողմը:

Մենք քաշուեցինք մի կողմ, և նա ասաց.

— Հնչի, մի զարմանալի բան են պատմում այստեղ: Այդ անիծած քրդուհին մոխիր է թափել գլխիս: Վալլահ (Աստուած վկայ), Շահը կատարելապէս գժուել է: Նա մտածում է կոտորել տալ այս հարեմի ներսում ու դրսում գտնուող բոլոր արուներին, սկսած իր վէզիրից մինչև վերջին ներքինին: Նա երդոււմ է իր գլխով, որ ինձ ամենից առաջ մորթել կը տայ, եթէ ես չգտնեմ ու չյայտնեմ նրան, թէ ով է յանցաւորը...

— Ի՞նչ յանցաւոր, հիվ, ի՞նչ, միթէ բան է պատահել, հարցրի ես:

— Զինաբը, այդ քրդուհին, էլ հիվ, պատասխանեց նա:

— Հն, հիմայ նոր հասկացայ, ասացի ես. այն քրդուհին, որին դուք այնքան սիրում էիք:

— Ե՞ս, ես էի սիրում, բացադանչեց հաքիմ բաշին վախեշալով: Ե՞ս էի սիրում նրան, կրկնեց նա. Աստուած մի արասցէ: Ի սէր Աստուծոյ, այդպէս մի խօսիր, հնչի. որովհետեւ բաւական է որ մէկի ականջին հասնի, ես կը դատապարտուեմ, և Շահն իսկոյն վիզս կտրել կը հրամայէ: Ես զարմանում եմ, ախր հիվ ասաց քեզ, զրտեղից լսեցիր, ինչպէս իմացար, որ ես նրան սիրում էի:

— Այն ժամանակ, երբ Զինաբը ձեր տնումն էր, ձեր մասին շատ բաներ էին ասում, և մարդիկ բոլորովին զարմանում էին, որ դուք, դուք, որ իմաստուն հաքիմ և լողման էք համարւում, ինչպէս էիք ձեր կեանքը վտանգի ենթարկել՝ պահելով մի քրդուհի, որը սատանայի սիրուհիներէից մէկն է և որի քայլերը աղէտաբեր են, նա կարող է թշուառութիւն բերել

մինչև անգամ մի ամբողջ կայսրութեան վրայ, հւր մնաց մի գերդաստանի վրայ, ինչպէս ձերը:

— Ճշմարիտ ես ասում, հանջի, ասաց Միրզա Ահմադը՝ տա-
րուբերելով իր գլուխը և ձախ ձեռով փորին զարկելով:
Օ՛ր, ինչքան յիմար եմ եղել ես, որ թոյլ եմ տուել ինձ դիւ-
թուել նրա սե-սե աչքերից, աչքեր, որոնց միջից հէնց դեռ ին-
քը դուրս էր նայում: Հէնց այս բոպէիս էլ նոյն դեռ նրա մէ-
ջը բնակւում է: Թող մարդիկ ինձ ղորոմսաղ ասեն, եթէ ա-
սածս ճիշտ չէ: Բայց, հանջի, այդ ամենն անցած է, ես չգիտեմ
ինչ անել. ասա, ի՞նչ անեմ, շուարել եմ:

— Ես ի՞նչ կարող եմ ասել, պատասխանեցի ես. բայց մի-
թէ Շահը որեւէ բան կ'անի նրան:

— Է՛հ, դու նրա մասին ես հարցնում. թող նա ջհաննա-
մը (դժոխքը) գնա. թող գնա իր հօր մօտ, բարի ճանապարհ
նրան: Ես միայն իմ կաշու մասին եմ մտածում:

Յետոյ սիրողաբար նայելով երեսիս՝ ասաց.

— Հանջի, դու գիտես, թէ ես միշտ քեզ ինչքան եմ սիրել:
Երբ դու թափառում էիր անտուն, անտէր, անգործ, ես քեզ
տարայ իմ տունը, քեզ լաւ վիճակի մէջ դրի և աշխատեցի
քեզ հասցնել այդ բարձր պաշտօնին, որ այս բոպէիս ունիս:
Եթէ այս աշխարհում կայ այնպիսի մի բան, որ կոչւում է
երախտագիտութիւն, ահա քեզ մի լաւ առիթ ցոյց տալու ինձ
քո երախտագիտութիւնը:

Նա լռեց և մի քանի վայրկեան մօրուքիս ծայրի հետ խա-
ղալուց յետոյ՝ հարցրեց.

— Դու կարողանում ես գուշակել, թէ ես ինչ եմ ուզում ասել:

— Ո՛չ, պատասխանեցի ես. դեռ չեմ հասկանում:

— Լաւ ուրեմն, ասաց նա, մի խօսքով յանցանքը քո վը-
րայ առ. ասա, որ դու ես յանցաւորը: Դիտես, հանջի, եթէ ես
համարուեմ յանցաւոր, շատ վարկաբեկ կը լինիմ, բոլորովին
կը խայտառակուեմ. իսկ եթէ դու լինիս, քեզ այնքան էլ մեծ
մնաս կամ անպատուութիւն չի լինիլ: Դու երիտասարդ ես, այդ-
պիսի բամբասանքներն ու անպատուութիւնները շատ չեն ազդել
քեզ. քեզ հչինչ չի լինիլ, սակայն ինձ համար, ճ, սարսափելի
բան կը լինի. ես կը զրկուեմ իմ պատուից:

— Զրկուել պատուից, բացազանչեցի ես. ի՞նչ է նշանա-
կում զրկուել պատուից, երբ մարդ առաջ քան դրանից զըր-
կուելը կը զրկուի իր կեանքից: Ես զարմանում եմ, հաճիմ
բաշի, ձեր խելը թռել է, գժուել էք, թէ ի՞նչ էք գժի տեղ
գնում: Ինչո՞ւ համար զճւր տեղը ես դատապարտուեմ. ինչո՞ւ
էք ցանկանում, որ ես մահապարտ լինիմ. ինչո՞ւ էք ուզում, որ

արիւնս փնայ ձեր վղին: Գիւսէք ինչ, ես միայն մէկ բան կ'ա-
նեմ, եթէ այդ խնդրի վրայ ինձ հետ խօսուի, ես միայն կ'ա-
սեմ, որ հաքիմ բաշին չ'է յանցաւորը, որովհետեւ նա այնքան
վախենում էր իր հարեմից, որ երբէք չ'էր համարձակուի մո-
տենալ Զինարին. սակայն, հաքիմ բաշի, լաւ իմացէք, որ ես
ամենեւին մէկին չեմ ասելու, թէ նս եմ մեղաւորը:

Մինչդեռ մենք խօսում էինք, Շահի ներքիններէց մէկը
վրայ հասաւ և ինձ ասաց.

— Շահի հրամանով ներքնապետը պատուիրում է ձեզ, որ
դուք և հինգ հոգի ձեր նասաղչիներէց այս գիշեր ճիշտ կէս
գիշերին պատրաստ լինէք հարեմի մուտքի մօտ գտնուող աշ-
տարակի տակ: Դուք պիտի ձեզ հետ ունենաք մի թաքուց
(ղիւք, դադաղ), որպէսզի նրա մէջ դնէք մի դիակ և տանէք
թաղելու:

— Բէ չա'շմամ (աչքիս վրայ), պատասխանեցի ես. էլ ու-
րիշ ոչ մի բառ չկարողացայ արտասանել: Բարեբախտ էի, որ
ներքինին շուտ հեռացաւ գնաց. միւրդա Ահմադն էլ արդէն գը-
նացել էր, մութն էլ կոխել էր, եթէ ոչ, այն վախը, տառա-
պանքն ու տրտմութիւնը, որ ներքնապետի պատուէրը պատ-
ճառեց ինձ, կարող էին մատնել ենձ: Ամբողջ մարմինս քրտին-
քով ծածկուեց, գլուխս պտոյտ եկաւ, ոտներս թուլացան, և
մօտ էի ուշաթափուելու. բայց ես իսկոյն սթափուեցի, երբ մտա-
ծեցի, որ իմ այդ դրութեամբ ես կարող էի ինձ մատնել:

— Ա՛խ, հառաչեցի ես. բաւական չ'է, որ ես այդ տարաբախտ
աղջկայ մահուան պատճառն եմ դարձել, և այժմ էլ նրա դա-
հիճը պիտի դառնամ: Վա՛յ, ես պիտի լինեմ իմ հարազատ զա-
ւակի համար գերեզման փորող: Ե՞ս պիտի թաղեմ նրան,
և ես պիտի ետ ուղարկեմ կեանքիս արիւնը իր մայր
հողին: Ա՛խ, ինչո՛ւ, ինչո՛ւ ինձ է վիճակուած անելու
այդ ամենը: Ո՛վ անգործ ճակատագիր, ինչո՛ւ, ինչո՛ւ: Բայց
արդեօք չ'եմ կարող փախչել, ազատուել այդ սարսափելի տե-
սարանից: Արդեօք աւելի լաւ չ'ի լինի, որ դաշոյնս խրեմ սըր-
տիս մէջ և վերջ տամ իմ գոյութեանը: Բայց ոչ, պարզ է, որ
իմ ճակատագիրը որոշուած, վճռուած ու կնքուած է: Իզո՛ւր,
ճ, իզո՛ւր եմ մաքառում, իզո՛ւր եմ տանջւում. ես պիտի կա-
տարեմ այն պարտքը, որ դրուած է վրաս: Ա՛խ, աշխարհ,
ինչ ես դու, ինչպէ՛ս լաւ կը ճանաչուես դու, եթէ ամեն մի
մարդկային էակ ետ քաշի, բարձրացնի իր գործերը ծածկող
քօղը և ցոյց տայ իրան իր հարազատ գոյնով:

Հոգիս խռովուած, սիրտս ճնշուած— կարծես թէ Դէմաւան-
դը իր բոլոր ծծմբով ծանրացել էր նրա վրայ— ես գնացի